# ՌԱՀՀԿ 2015

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՀԱՅԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՈՒՐՎԱԳԻՐ



## ACNIS 2015
STRATEGIC SUMMARY

## АЦСНИ 2015
СТРАТЕГИЧЕСКИЙ ОБЗОР

## Հայաստան-2015.
*նոր Սահմանադրությամբ՝ միջազգային նոր պայմաններում*


Հայոց ցեղասպանության 100 տարին — էջ 3
Remembering the Armenian Genocide

Հայաստանը Ռուսաստանի մերձավորարեւելյան քաղաքականության ճիրաններում — էջ 4

Армения в тисках российской политики на Ближнем Востоке — էջ 9

Հայաստանի ներքաղաքական զարգացումների տրամաբանությունը — էջ 10

«Էլեկտրիկ Երեւան»՝ քաղաքացիական անհնազանդության հայաստանյան օրինակ — էջ 13

Կարինը, Ալեքը եւ ՌԱՀՀԿ-ը «1915»-ը ներկայացրին Վանում — էջ 15
Garin, Alec, ACNIS Take “1915” to Van

Ավետիսյանների ընտանիքի սպանությունը ՌԱՀՀԿ-ի սեմինարի օրակարգում — էջ 16
ACNIS Discusses the Causes and Consequences of the January Incidents

Դեսպանների ընդունելություն — էջ 17
Ambassadorial Outreach

Հարյուր տարվա աքսորը *(հատված)* — էջ 18
One Hundred Years of Exile *(excerpt)*

Հայաստան-2015. փաստեր, իրադարձություններ — էջ 21

Որո՞նք էին անցնող տարվա հասարակական-քաղաքական կյանքի առանցքային իրադարձությունները, ի՞նչ կորցրեց եւ ի՞նչ շահեց Հայաստանը 2015-ին, կա՞ն արդյոք որակական փոփոխությունների նախանշաններ ներքին եւ արտաքին հարթության վրա: Ծանոթացեք ՌԱՀՀԿ փորձագիտական խմբի ամփոփ տեսականին:

ARMENIAN GENOCIDE 100

1915-2015 100th Year of Remembrance








© Ռազմավարական եւ ազգային հետազոտությունների հայկական կենտրոն (ՌԱՀՀԿ), 2015

© Armenian Center for National and International Studies (ACNIS), 2015

© Армянский центр стратегических и национальных исследований (АЦСНИ), 2015

# Հայոց ցեղասպանության 100 տարին.
## Րաֆֆի Հովհաննիսյանի խոսքը

THE JERUSALEM POST

## Remembering the Armenian Genocide by Raffi K. Hovannisian

**The Jerusalem Post has published an article by Raffi K. Hovannisian, the first Foreign Minister of the Republic of Armenia, ACNIS founder and leader of the Heritage Party.**

**11 April 2015**

YEREVAN, Armenia – On April 24, 2015, a century closes circle upon the 1915 genocide and great national dispossession perpetrated by the Young Turk Party against the Armenian people.

This primer in premeditated nation-killing resulted not only in the deportation and murder of 1.5 million civilians on their native soil but also in the destruction of an entire civilization – nearly four millennia of continual presence in an ancestral cradle long mapped as Western Armenia.

The government of Turkey, which now occupies those lands, denies that a genocide ever took place there.

What shall I say on that April day, 100 years later, to my survivor grandfathers Kaspar and Hovakim, who had watched their parents and siblings killed by the sword or else taken away for conversion? Or to their wives, my grandmothers Siroon and Khengeni, the latter of whom was saved by a righteous Turkish neighbor?

We know that, in 1915, the survivors of Western Armenia were dispersed to the four corners of the earth and live to this day, some well and others poorly, in their adopted countries. My own family moved to the United States; I grew up in Los Angeles. We know too that a small Armenian republic, commonly known as Eastern Armenia, has recently come forth from under the rubble of the Soviet Union.

I repatriated to that Armenia, Eastern or Soviet Armenia, in 1989, during the final hours of the USSR. In 1991, I served as the new republic's first foreign minister. I raised Armenia's flag before the headquarters of the United Nations. This was not the Western homeland of my grandparents, but it was the reborn Armenia I was proud to call home.

Soon, however, our newfound freedom began to disintegrate.

Greed and corruption plagued the halls of government. I resigned. Years later I founded an opposition party, Heritage, and entered parliament. In 2013, I ran for president. Official results gave me 37 percent of the vote, although the hundreds of thousands who staged protests that spring were convinced this was not so. The incumbent administration stands.

Pending the accomplishment of a Republic of Armenia that is ruled by law, it is the progeny of Western Armenia who must come forward to press their collective rights, that flow from genocide and national dispossession.

This necessarily presumes a novel, contemporary mechanism of recourse with the denialist government of Turkey, and the braver segments of Turkish civil society.

A comprehensive agenda they must forge together, and in consultation with official Yerevan, but the bottom line must encompass the creation of an Armenian national hearth in historic Western Armenia.

This strategy should entail: 1) a guaranteed right of return for survivors of the genocide and their generations, whether or not their property deeds are currently intact; 2) designation for them of a special Hearth status that does not require a change of existing citizenship; 3) the rebuilding of Armenian schools and colleges, churches and monasteries, all with jurisdiction duly vested in the Armenian Hearth; 4) the construction of memorials and introduction of public curricula to educate the Turkish public about their true past; 5) celebration of the Armenian identity throughout the land, from Mount Ararat to Musa Dagh; and 6) negotiations between the republics of Turkey and Armenia triggering the first-ever sovereign reciprocal demarcation of the official frontier, including but not limited to provisions for an Armenian easement to the Black Sea.

As for me, having lived in Eastern Armenia for 25 years, the western heartlands of my grandparents have not stopped being mine. They are not, and shall never become, wastelands. They have been breached, perforce and by malicious policy, over the past century. But they and I continue to belong to each other. Nobody has more title than I do, the grandson of Kaspar and Hovakim, and the resilient multitudes whose forebears are as sacred as mine.

I plan shortly to return to find my Home, and trust that the Turkish authorities currently in power – pending their own facing of history and their own recognition of and redemption for the Armenian Genocide – will take every measure that my homecoming will be received with full honor, dignity, and an enduring respect for my rights as a child of the new-old Homeland.

*The author, whose grandparents hail from Garin-Erzerum, Mezre-Elazig, Bazmashen-Bizmishen and Ordu, was born in the United States, worked as an international lawyer in Los Angeles, and moved to Yerevan, becoming the nation's first foreign minister. He is the executive producer of 1915 (1915themovie.com), which will be released in theaters on April 17.*

# Հայաստանը Ռուսաստանի մերձավորարեւելյան քաղաքականության ճիրաններում



## Մերձավոր Արեւելքում Ռուսաստանի քաղաքականությունը եւ միջազգային իրադրության փոփոխությունը

2015 թվականին Հայաստանը մոտեցավ արմատապես փոխված միջազգային իրադրությանը: Հայաստանի ռազմավարական գործընկերոջ՝ Ռուսաստանի մուտքը ահաբեկչության դեմ պայքարի Սիրիայում ծավալվող միջազգային քաղաքականություն փոխեց Հայաստանի հարեւան երկրների եւ հետխորհրդային ողջ տարածքի քաղաքականության բոլոր գերակայությունները: Ուկրաինական ճգնաժամի կապակցությամբ միջազգային մեկուսացման մեջ հայտնված Ռուսաստանը, չգիտես ինչու, որոշեց կտրուկ շրջադարձ կատարել իր արտաքին քաղաքականության մեջ: Ռուսաստանի նախագահ Վ.Պուտինը հայտարարեց. Սիրիայում ահաբեկիչների դեմ գործողություններ իրականացնելու համար կարող է միայն երկու հիմնավորում լինել՝ ՄԱԿ-ի անվտանգության խորհրդի բանաձեւը կամ այդ երկրի պաշտոնական իշխանությունների խնդրանքը:

Այս տարվա սեպտեմբերի վերջին Ռուսաստանը ՄԱԿ-ի անվտանգության խորհրդի օրակարգ մտցրեց Սիրիայի վերաբերյալ բանաձեւի նախագիծ, որը մերժվեց Ֆրանսիայի կողմից եւ արժանացավ ԱՄՆ-ի քննադատությանը: Արագ աշխատեց Ռուսաստանի՝ Սիրիա մտնելու երկրորդ տարբերակը: Սիրիայի նախագահ Բաշար Ասադը Ռուսաստանի իշխանություններին խնդրեց ռազմական օգնություն ցուցաբերել ընդդիմադիր զորքերի, ինչպես նաեւ «Իսլամական պետության» ահաբեկչական խմբավորման դեմ պայքարում: Սեպտեմբերի 30-ին Ռուսաստանի Դաշնության խորհուրդը նախագահ Պուտինի խնդրանքով նրան թույլատրեց ՌԴ զինված ուժերն օգտագործել արտասահմանում:

Ռուսաստանի՝ Սիրիա մտնելուց հետո գլխավոր հարցն այն դարձավ, թե արդյո՞ք համաձայնեցված էր այդպիսի քայլը արեւմտյան տերությունների հետ, թե՞ Ռուսաստանը դեմարշ կատարեց ահաբեկչության դեմ պայքարի միջազգային կոալիցիա կազմավորելու համապատկերին: Բայց արդեն առաջին օրերին պարզ դարձավ, որ Ռուսաստանի գործողությունները համահունչ են Արեւմուտքի տրամադրվածությանը: Դրա գլխավոր վկայությունն այն է, որ մի քանի օրվա ընթացքում սառեցվեց իրավիճակը Ուկրաինայում: Իսկ հետո եղան միջազգային կոալիցիայի առաջնորդների բացահայտ հայտարարությունները, թե Ռուսաստանը կարող է սիրիական ճգնաժամի հանգուցալուծման գործում շատ կարեւոր դերակատար լինել, եթե կենտրոնանա «Իսլամական պետության» դեմ պայքարի, այլ ոչ թե Սիրիայի նախագահ Ասադի աջակցության վրա:

Թե որոնք էին սիրիական ճգնաժամի մեջ մտնելու՝ բուն Ռուսաստանի ծրագրերը, կարելի է միայն ենթադրել, սակայն Սինայի թերակղզու վրա ռուսական ուղեւորատար ինքնաթիռի պայթյունը եւ Փարիզում տեղի ունեցած բռնարարքը ահաբեկչության դեմ պայքարի քաղաքականության մեջ շատ արագ առանցքային դարձրին Ռուսաստանի դերը: Ռուսաստանի հետ համատեղ կոալիցիա կազմավորելու՝ Ֆրանսիայի նախագահի առաջարկությունը փոխեց երկրների համախմբման գործընթացի տրամաբանությունը: Ի հայտ եկան դեպքերի այդպիսի զարգացումը մերժող երկրներ: Առաջին հերթին՝ Թուրքիան: Սպասելի էր Ռուսաստանի հետ վերջինիս հարաբերությունների բարդացումը: Առիթը նոյեմբերի 24-ին Սիրիայի սահմանին թուրք օդաչուների կողմից խփված ռուսական ՍՈՒ-24Մ ռմբակոծիչի հետ կապված միջադեպն էր: Ռուսաստանը եւ Թուրքիան կանգնեցին ռազմական առճակատման եզրին, իսկ մնացյալ աշխարհին բաժին հասավ գլոբալ առումով նշանակալիություն ունեցող միանգամայն նոր խնդիրների բեռը, որոնք էլ որոշեցին միջազգային հարաբերությունների հետագա քաղաքական զարգացման տրամաբանությունը:

## Ռուսաստանի ու Թուրքիայի հակամարտությունը եւ գլոբալ առումով նշանակալի խնդիրների ձեւավորումը

ՆԱՏՕ-ի անդամ երկրի (Թուրքիա) եւ մահմեդական զգալի բնակչություն ունեցող, ինչպես նաեւ հարեւան մահմեդական երկրների (Ռուսաստան) միջեւ խորացող թշնամանքն ի վիճակի է խթանել գլոբալ նշանակության կառուցողական գործընթացները: Այսօրվա դրությամբ կարելի է առանձնացնել գլոբալ առումով նշանակալի խնդիրների առնվազն երեք բլոկ, որոնք առաջացել են ռուս-թուրքական հակամարտության եւ Թուրքիայի դեմ ռուսաստանյան պատժամիջոցների կապակցությամբ:

Ա. ՆԱՏՕ-ի կաթվածահարության եւ ապահինտեգրման սպառնալիքը:
Բ. Մերձավորարեւելյան տարածաշրջանի երկրների դիրքորոշումների վտանգավոր բեւեռացման սպառնալիքը՝ ըստ Ռուսաստանի, Իրանի, Սիրիայի, Իրաք-Թուրքիայի, Սաուդյան Արաբիայի, Քաթարի բլոկների:
Գ. ԱՊՀ-ի եւ Ռուսաստանի ապահինտեգրման սպառնալիքը:



**Ա. ՆԱՏՕ-ն Ռուսաստանի եւ Թուրքիայի միջեւ. դաշինքի կաթվածահարության եւ ապաինտեգրման սպառնալի-քը**

ՆԱՏՕ-ի շրջանակներում ծագած անորոշության առաջին ազդանշան դարձավ նոյեմբերի 13-ին Փարիզում տեղի ունեցած ահաբեկչական գործողությունը: Դաշինքի երկրները որեւէ կերպ չարձագանքեցին Ֆրանսիայի նախագահի հայտարարությանն առ այն, որ երկիրն ագրեսիայի է ենթարկվել՝ չէին գործել ՆԱՏՕ-ի կանոնադրության 5 կետ, եւ Ֆրանսիայի նախագահը ստիպված է եղել դիմել ԱՄՆ-ին եւ Ռուսաստանին՝ առաջարկելով ստեղծել ահաբեկչության դեմ պայքարի համատեղ կոալիցիա:

Սիրիայի սահմանին թուրք օդաչուների կողմից խոցված ռուսական ՍՈՒ-24Մ ռմբակոծիչին առնչվող միջադեպը ՆԱՏՕ-ի համար ստեղծել է ընտրության արդեն գլոբալ առումով նշանակալի իրավիճակ: ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղար Յենս Ստոլտենբերգը հայտարարեց, որ հանդես է գալիս «Մոսկվայի եւ Անկարայի միջեւ ուղղակի երկխոսության օգտին»: Այդուհանդերձ՝ դաշինքում քննարկում են, թե ինչպես ավելի լավ պաշտպանել ՆԱՏՕ-ի երկրների օդային տարածքը: Պարզ է, որ Թուրքիայի պատճառով Ռուսաստանի հետ ՆԱՏՕ-ն չի պատրաստվում կռվել: Ավելին՝ դեկտեմբերի 2-ին գլխավոր քարտուղարը հայտարարեց, որ ՆԱՏՕ-Ռուսաստան խորհուրդը նորից գումարվելու է Ռուսաստանի հետ փոխգործակցությունը վերսկսելու համար: Միաժամանակ ՆԱՏՕ-ի ղեկավարությունը Չեռնոգորիային առաջարկել է դառնալ դաշինքի անդամ:

Չինաստանի ԱԳ նախարարության դեկտեմբերի 4-ին արած հայտարարությունը վկայում է, թե որքան է ներկայիս պայմաններում բարդանում ՆԱՏՕ-ի գործունեությունը: Չինաստանի ԱԳՆ պաշտոնական ներկայացուցիչը հայտարարել է. «Մենք գտնում ենք, որ ՆԱՏՕ-ն «սառը պատերազմի» արգասիք է, եւ Չինաստանը հանդես է գալիս հավելյալ պետություններ ներգրավելու հաշվին դաշինքի ընդարձակման դեմ: ...միջազգային հանրությունը պետք է հրաժարվի «սառը պատերազմի» գաղափարից եւ հաստատի համընդհանուր, ամբողջական, համագործակցության եւ կայուն անվտանգության վրա հիմնված նոր հայեցակարգ»: Այն պայմաններում, երբ Չինաստանը աջակցում է Ռուսաստանի սիրիական քաղաքականությունը, ՆԱՏՕ-ի նկատմամբ նմանօրինակ դիրքորոշումը նշանակալի իմաստ է ձեռք բերում:



Կարելի է նկատել, որ այն սկզբունքները, որոնց վրա «սառը պատերազմի» կայուն շրջանում հիմնված էր ՆԱՏՕ-ի դաշինքը, աշխարհում անկայունության ներկայիս շրջանում անլուծելի խնդիրներ են ստեղծում դաշինքի մեջ մտնող երկրների համար: Ավելի հաճախ է ՆԱՏՕ-ն հանդիպում այնպիսի իրավիճակների, երբ դաշինքի սկզբունքների ու կանոնադրության վրա հիմնվող նրա անդամները իրենց գործողություններով վտանգավոր դրության մեջ են դնում խաղաղությունը: Թուրքիայի գործողությունները հենց դրա ակնառու օրինակն են: Այդ միտումի զարգացումը կարող է հանգեցնել դաշինքի ապաինտեգրմանը կամ նրա փլուզմանը:

**Բ. Մերձավորարեւելյան տարածաշրջանի երկրների դիրքորոշումների վտանգավոր բեւեռացման սպառնալիքը՝ ըստ Ռուսաստանի, Իրանի, Սիրիայի, Իրաք-Թուրքիայի, Սաուդյան Արաբիայի, Քաթարի բլոկների**

Ռուսաստանի եւ Թուրքիայի միջեւ ծագած թշնամանքի առաջին իսկ օրերից կողմերը դաշնակիցների ինտենսիվ փնտրտուք էին սկսել: ՆԱՏՕ-ից եւ ԱՄՆ-ից միանշանակ երաշխիքներ ստանալու՝ Թուրքիայի առաջին իսկ փորձերը չէին կարող բավարարել այդ երկրին: Ռուսաստանի հետ հարաբերությունները երկխոսության միջոցով հարթելու խորհուրդը, փաստորեն, Թուրքիայի դաշնակիցների կողմից «ձեռքերը լվանալու» գործողություն էր: Ադրբեջանից աջակցության հավաստիացումներ ստանալը եւ զորքերը իրաքյան Քրդստան մտցնելը դարձան տարածաշրջանում Ռուսաստանի ներկայության դեմ սկսվող՝ Թուրքիայի ինքնուրույն քաղաքականության նախակարապետները: Քրդերին ԱՄՆ-ի եւ Ռուսաստանի ցուցաբերած աջակցությունը Թուրքիայի կողմից ընկալվում է որպես իր անվտանգության գլխավոր սպառնալիք:

Տարածաշրջանում Թուրքիայի հետ հարեւան երկրներն անթույլատրելի գնահատեցին իր զորքերը Իրաքի տարածք մտցնելու՝ Թուրքիայի որոշումը: Իրանը հայտարարեց, որ այդպիսի որոշումը սպառնալիք է տարածաշրջանի համար, իսկ Իրաքի ղեկավարությունը հայտարարեց Քրդստանում գտնվող թուրքական զորքերի դեմ օդուժ կիրառելու իր մտադրությունների մասին:

Սաուդյան Արաբիան եւ Քաթարը պաշտպանեցին Թուրքիային՝ Ռուսաստանի հետ նրա հակամարտությունում: Թուրքիայի դեմ տնտեսական պատժամիջոցներ կիրառելու՝ Ռուսաստանի որոշումից հետո Թուրքիան Քաթարի հետ ստորագրեց բնական հեղուկ գազի մատակարարման համաձայնագիր: Ժամանակին Թուրքիան աջակցում էր Եմենում Սաուդյան Արաբիայի ռազմական գործողությունը՝ այն դեպքում, երբ Իրանը սատարում էր այդ երկրի շիա ընդդիմությանը: Սիրիայում եւ Իրաքում տեղի ունեցող գործընթացներում Իրանի հարաճուն մասնակցությունը, դեկտեմբեր ամսին Միացյալ նահանգների կողմից Իրանի նավթի վաճառքի բռնարգելքի վերացումը, ինչպես նաեւ վերջինիս Ռուսաստանի կողմից Ս-300 համակարգերի ու միջուկային տեխնոլոգիաների տրամադրումը Սաուդյան



Արաբիային, Քաթարին եւ Թուրքիային ստիպում են ջղաձգորեն արձագանքել տարածաշրջանում Իրանի հարաճուն դերին: Նույնքան ջղաձգորեն է տանում Ռուսաստանը Քաթարի եւ Սաուդյան Արաբիայի սաստկացող նավթագազային էքսպանսիան Եվրոպայի շուկաներում:

Տարածաշրջանում առանձին խնդիր է քրդական գործոնը: Դեռեւս հոկտեմբերին Թուրքիայի նախագահը հայտարարեց, թե ուզում են Թուրքիան պառակտել: Նրա խոսքով՝ «ռազմականացված քրդական խմբավորումների կազմում կան ահաբեկչական Քրդական բանվորական կուսակցության 1400 անդամներ: Սակայն այդ ահաբեկիչներին ռազմական օգնություն են ցույց տալիս այն երկրները, որոնք ուզում են Թուրքիայի բարեկամներ երեւալ» (խոսքն, իհարկե, ԱՄՆ-ի մասին է): Եթե հաշվի առնենք, որ քրդերին ռազմական օժանդակություն է ցույց տալիս նաեւ Ռուսաստանը, կարելի է պատկերացնել, թե ինչպիսի հակասական շահեր են ձեւավորվում տարածաշրջանում: Անկասկած, նշված բոլոր միտումները երեւակում են Մերձավոր Արեւելքի տարածաշրջանում ապագա քաղաքական բլոկների ուրվագծերը, որոնք հիմնված են երկրների խիստ հակասական շահերի վրա: Ռազմական դիմակայության դեպքում տարածաշրջանը կարող է ենթարկվել քաղաքական զգալի վերաձեւումների:

**Գ. ԱՊՀ-ի եւ Ռուսաստանի ապահինտեգրման սպառնալիքը**



Պակաս բարդ չէ իրավիճակը հետխորհրդային տարածքում: ՀԱՊԿ շրջանակներում Ռուսաստանի դաշնակիցներ համարվող երկրները չեն ցուցաբերում «Իսլամական պետության» դեմ պայքարում ավանդ մուծելու մտադրություններ, թեեւ ՀԱՊԿ Կանոնադրության 8-րդ հոդվածում նշված է, որ «անդամ պետությունները համակարգում եւ միավորում են իրենց ջանքերը միջազգային ահաբեկչության եւ ծայրահեղականության դեմ պայքարում»: Նույնիսկ Թուրքիայի կողմից ռուսական կործանիչի խոցման փաստի գնահատման հարցում բոլորը ծայրաստիճան զսպվածություն դրսեւորեցին: Չմիջամտելու դիրքորոշում որդեգրեց Բելառուսի ԱԳ նախարարությունը՝ մտահոգություն հայտնելով ՍՈՒ-24Մ-ի հետ կապված միջադեպի կապակցությամբ, որում մասնակցություն ունենն «մեզ համար եղբայրական Ռուսաստանը եւ բարեկամական Թուրքիան»: Նոյեմբերի 30-ին Ղազախստանի նախագահ Նուրսուլթան Նազարբաեւը Ռուսաստանին եւ Թուրքիային կոչ արեց համատեղ հետաքննել ռուսական խփված կործանիչի հետ կապված միջադեպը եւ վերականգնել հարաբերությունները: Ընդ որում, նկատեց, որ «ռուսական կործանիչը չէր հարձակվել Թուրքիայի վրա, Թուրքիա չէր գնացել»: Այդպիսի դիրքորոշումը հասկանալի է: Լինելով Ռուսաստանի դաշնակիցը, Ղազախստանը ակտիվորեն փոխգործակցում է ՆԱՏՕ-ի եւ, մասնավորապես, Թուրքիայի հետ՝ ռազմական ու կրոնական հարցերում: ԱՊՀ անդամ Ադրբեջանը բոլոր հարցերում բացահայտորեն աջակցեց Թուրքիային: Ընդհանրապես, ԱՊՀ մահմեդական երկրները դաժան ընտրության առջեւ են կանգնել եւ, այնուամենայնիվ, նրանք ստիպված են ապագայում կայացնել ոչ դյուրին որոշումներ:

Բուն Ռուսաստանի ներսում անկանխատեսելի է մահմեդական ժողովուրդների հետ կապված իրավիճակը: Առայժմ միայն Չեչնիայի նախագահն է բացահայտ հանդես գալիս Թուրքիայի հանդեպ Ռուսաստանի քաղաքականության աջակցությամբ: Թաթարստանի նախագահ Ռուստամ Մինիխանովը, որը սովորաբար մեկնաբանում է միջազգային առավել կարեւոր իրադարձությունները, գերադասեց լռել: Ռուսաստանի եւ Թուրքիայի միջեւ առճակատման ուժեղացման դեպքում բացահայտ հակասությունները կարող են ներքաղաքական բարդ իրավիճակ ստեղծել բուն Ռուսաստանում:

**Վրաստանը Ռուսաստանի եւ Թուրքիայի միջեւ**

Ռուսաստանի սիրիական գործողության ամենասկզբից Վրաստանի քաղաքականության մեջ ի հայտ եկան էներգետիկ հարցերում Ռուսաստանի հետ հարաբերությունների վերանայման միտումներ: Վրաստանի կառավարությունը մտադրություն հայտնեց գնել մեծ ծավալի ռուսական գազ եւ այն Հայաստանով՝ տարանցիկ ճանապարհով հասցել Իրան: Միեւնույն ժամանակ, նոյեմբերի 28-ին Վրաստանը միացավ Թուրքիայից մինչեւ Չինաստան տրանսպորտային միջանցքի դաշինք ստեղծելու մասին համաձայնագրին: Այդպիսի համաձայնագիր էր ստորագրվել Ստամբուլում՝ Ադրբեջանի, Վրաստանի, Ղազախստանի եւ Չինաստանի ներկայացուցիչների կողմից:

Դեկտեմբերի 2-ին Վրաստանը նորից դիմեց ՆԱՏՕ-ին՝ դաշինքի կազմում իրեն ընդունելու խնդրանքով: Դա այն բանից հետո էր, երբ հայտնի դարձավ, որ ՆԱՏՕ-ի անդամ երկրների ղեկավարները որոշում են ընդունել հրավիրել Չեռնոգորիային՝ դառնալու դաշինքի 29-րդ անդամ: Նույն օրը ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղար Յենս Ստոլտենբերգը հայտարարեց, որ դաշինքը պաշտպանում է Վրաստանի՝ ՆԱՏՕ մտնելու ձգտումները, եւ դռները նրա առջեւ բաց են: Այդուհանդերձ՝ Վրաստանին առաջարկեցին չշտապել:

Ռուսաստանի հետ Թուրքիայի հակամարտության մասով Վրաստանը որոշակի դիրքորոշում չարտահայտեց: Նկատելի է այդ հարցում զգուշավորություն դրսեւորելու՝ նրա ձգտումը: Ռուսաստանի հետ կապերի գծով վրացական վարչապետի հատուկ ներկայացուցիչ Զուրաբ Աբաշիձեն ընդամենը հայտարարեց, որ «եթե Ռուսաստանը եւ Թուրքիան չպայմանավորվեն, տուժել կարող են բոլորը: Դա կարող է տարածագոտում լուրջ ապակայունացում առաջացնել»:

Թուրքական F-16 կործանիչը ռուսական ՍՈՒ-24Մ ռմբակոծիչին խփելուց արդեն մեկ օր անց Վրաստանն իր մաշկի վրա զգաց ռուս-թուրքական դիմակայության հետեւանքները: Միակ ավտոմայրուղին, որը Ռազմավիրական ճանապարհով Վրաստանը կապում է Ռուսաստանի հետ, կաթվածահար վիճակում հայտնվեց այն բանից հետո, երբ Անկարայի դեմ Մոսկվայի կիրառած տնտեսական պատժամիջոցների շրջանակներում ռուսաստանցի սահմանապահները դադարեցրին սահմանով բաց թողնել թուրքական համարանիշներով մեծաբեռ ավտոմեքենաները:




Վերին Լարսի անցակետում կուտակվել էին թուրքական հարյուրավոր բեռնատարներ՝ դրանով իսկ խանգարելով մեքենաների երթեւեկությունը Վրաստանից ու Հայաստանից դեպի Ռուսաստան: Վրաստանի օդային տարածքը փակ է Ռուսաստանի ռազմական օդանավերի համար, ինչը նույնպես Հայաստանի վիճակը բարդացնող գործոն է:

**Լեռնային Ղարաբաղը՝ Թուրքիայի նշանառության տակ. Ադրբեջանի ոչ դյուրին ընտրությունը**

Ռուսական կործանիչի հետ պատահած միջադեպից անմիջապես հետո Թուրքիայի վարչապետն ակտուալացրեց Լեռնային Ղարաբաղի հիմնախնդիրը՝ հայտարարելով, թե Թուրքիան կօգնի Ադրբեջանին՝ ազատագրել «բռնազավթված տարածքները՝ ներառյալ Ղարաբաղը»: Համաշխարհային մամուլը եւ վերլուծական հանրությունն իսկույն եւեթ այդ քայլը գնահատեց որպես «Ռուսաստանի համար երկրորդ ճակատի բացում Լեռնային Ղարաբաղում»: Սակայն այդ հայտարարությամբ Թուրքիան ավելի շուտ Ադրբեջանին առաջարկում է միանշանակ կողմնորոշվել եւ Ռուսաստանի հետ հակամարտություններում աջակցել իրեն: Եվ դա այն պայմաններում, երբ Ադրբեջանը ռուսական ռազմական օդուժին չի խոչընդոտում իր տարածքի վրայով թռչել Սիրիա, ավելի շուտ՝ նույնիսկ չի գնում այդպիսի ռիսկի: Ադրբեջանի համար, որը վերջին տարիներս ինտենսիվորեն ամրապնդել է Ռուսաստանի հետ ռազմական համագործակցությունը, Թուրքիայի այդպիսի առաջարկը չէր կարող չստեղծել բարդ կացություն: Այդ հանգամանքն իրեն զգացրեց Թուրքիայի արտաքին գործերի նախարար Մեւլյութ Չավուշօղլուի նոյեմբերի 27-ին Բաքու կատարած այցի ժամանակ:

Երկու երկրների արտաքին գործերի նախարարների հանդիպումից հետո տեղի ունեցած համատեղ մամլո ասուլիսում Էլմար Մամեդյարովը հայտարարեց, որ «Ռուսաստանը հանդես է եկել Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման վերաբերյալ առաջարկություններով, որոնք ներկայացվել էին ՌԴ ԱԳ նախարար Սերգեյ Լավրովի տարածաշրջան կատարած այցի ընթացքում: Առաջարկվել էր նաեւ կազմակերպել Ադրբեջանի եւ Հայաստանի նախագահների հանդիպում, եւ մենք տվել ենք մեր համաձայնությունը: Ակնկալում ենք, որ այդ հանդիպումը տեղի կունենա մոտ ժամանակներս»: Փաստորեն պաշտոնական Բաքուն մերժեց ղարաբաղյան խնդրի կարգավորման մասով Թուրքիայի առաջարկը:

Ղարաբաղյան հիմնախնդրի կարգավորման հարցում Ադրբեջանի ընտրության պայմաններն ավելի նեղացան այն բանից հետո, երբ դեկտեմբերի 3-ին Բելգրադում ԵԱՀԿ անդամ երկրների նախարարների խորհրդի նիստում Ռուսաստանի, ԱՄՆ-ի եւ Ֆրանսիայի պատվիրակությունների ղեկավարները հայտարարեցին, որ հավատարիմ են մնում «ղարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորման հարցում միջնորդության սկզբունքներին», եւ որ «Մինսկի խումբը կողմերի ընդունած միակ ձեւաչափն է, որը ձեռք է բերել ԵԱՀԿ բոլոր անդամ երկրների վստահությունը ... Խաղաղ բանակցությունների անհաջողության մեջ Մինսկի խմբի համանախագահների ցանկացած մեղադրանք խաղաղ գործընթացին խանգարող հիմնական տարրն է»:

Գիտակցելով պահի բարդությունը, Թուրքիան գնաց Ադրբեջանի վրա՝ վերջինիս համար ռազմավարական կարեւորություն ունեցող մյուս խնդիրների միջոցով ճնշում գործադրելու ուղիով: Դեկտեմբերի 3-ին Ադրբեջան պաշտոնական այց կատարեց Թուրքիայի վարչապետ Ահմեդ Դավութօղլուն: Այցի արդյունքներով Ադրբեջանի նախագահը հայտարարեց, որ Բաքուն եւ Անկարան բոլոր հարցերում սատարում են միմյանց: «Որքան ուժեղ լինի Թուրքիան, այնքան ուժեղ կլինի Ադրբեջանը»,- ասել է Ալիեւը: Նա հիշեցրել է, որ կողմերի դիրքորոշումները համընկնում են նախեւառաջ ղարաբաղյան հակամարտության կարգավորման հարցում:



Կողմերը պայմանավորվեցին, նախատեսվում է մինչեւ 2018 թվականը ավարտել Անդրանատոլյան գազամուղի (TANAP) կառուցումը: Դրանով ադրբեջանական գազը կհասնի Թուրքիա: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ օրեր առաջ Ադրբեջանը Թուրքիային առաջարկել էր իր տարածքը՝ Կասպից ծովով դեպի Կենտրոնական Ասիա բեռնափոխադրումների համար, կարելի է պնդել, որ Ռուսաստանի եւ Թուրքիայի միջեւ հակամարտության տնտեսական բաղադրիչի գծով Ադրբեջանը աջակցել է Թուրքիային: Ռուսաստանի պատժամիջոցների սաստկացման պայմաններում այդ հանգամանքը ձեռք է բերում ռազմավարական իմաստ եւ չի կարող չազդել Ռուսաստանի եւ Ադրբեջանի հարաբերությունների վրա: Այդ պայմաններում միանգամայն տրամաբանական է թվում Բելառուսի հետ Ադրբեջանի մերձեցումը՝ վերջինիս նախագահը խոստացել էր Եվրասիական միությունում պաշտպանել Ադրբեջանի շահերը:

Լեռնային Ղարաբաղի հետ կապված խնդիրների մասով Ադրբեջանի անզորությունը խորհրդանշական կերպով արտահայտվել էր դեկտեմբերի 3-ի լույս 4-ի գիշերը, երբ զորքերի շփման գծում հայ զինվոր էր սպանվել: Հատկանշական է, որ Բաքու այցի օրը Դավութօղլուն դիմել էր Հայաստանին՝ ազատել Ադրբեջանի տարածքները: ՀԱՊԿ անդամ երկրների ամորֆ դիրքորոշումների համապատկերին Թուրքիայի հետ Ադրբեջանի դիրքորոշումների նմանօրինակ մերձեցումը անմիջական սպառնալիք է ներկայացնում Հայաստանի անվտանգությանը:

## Հայաստանը նոր մարտահրավերների առջեւ



Վերը նկարագրված բոլոր գործոնները, որոնք հիմնավորված են Ռուսաստանի սիրիական գործողությամբ, Հայաստանի համար ստեղծում են ինչպես անվտանգության նոր սպառնալիքներ, այնպես էլ ազգային անվտանգության ապահովման համար նոր միջազգային ռեսուրսներ: Լինելով Ռուսաստանի հետ ռազմաքաղաքական սերտ փոխգործակցության մեջ, Հայաստանն առարկայականորեն չի կարող մի կողմ քաշվել տարածաշրջանում տեղի ունեցող գործընթացներից: Ռուսաստանի եւ Թուրքիայի հարաբերությունների վատթարացումը նոր մթնոլորտ է ստեղծել Լեռնային Ղարաբաղի խնդրի շուրջ:

Օբյեկտիվորեն հանդիսանալով Թուրքիայի դաշնակիցը, Ադրբեջանը չի կարող Լեռնային Ղարաբաղը վերադարձնելու գործում ապավինել Ռուսաստանի աջակցությանը: Բարդացել է նաեւ ղարաբաղյան կնճռի ռազմական հանգուցալուծման խնդիրը: Դրան օժանդակում է այն հանգամանքը, որ Հայաստանի ու Ռուսաստանի հարաբերությունները նոր ձեւեր են ձեռք բերում: Նոյեմբերի 11-ին Ռուսաստանի նախագահը կարգադրել է Ռուսաստանի եւ Հայաստանի միջեւ համաձայնագիր ստորագրել Հավաքական անվտանգության կովկասյան տարածաշրջանում ՀՕՊ-ի միացյալ տարածաշրջանային համակարգ ստեղծելու մասին: Այդ համաձայնագրի իմաստը հանգեցնում է նրան, որ Ռուսաստանը հնարավորություն է ստանում ՀՕՊ-ի իր համակարգերն օգտագործել Հայաստանի օդային տարածքում: Ռուսաստանի եւ Իրանի ռազմաքաղաքական համագործակցությունը նույնպես զսպող գործոն է հանդիսանում Ադրբեջանի համար:

Նոր պայմաններում մյուս կարեւորագույն հանգամանքը քրդական գործոնի ակտիվացումն է: Քրդերի եւ նրանց աջակցող երկրների հետ Թուրքիայի հարաբերությունների հետագա սաստկացումը կտրուկ բարձրացնում է Հայաստանի միջազգային դերը՝ այն պատճառով, որ Ռուսաստանը քրդերին աջակցող երկրներից մեկն է: Քրդերի հարցով Ռուսաստանի եւ Թուրքիայի միջեւ ցանկացած դիմակայություն ինքնաբերաբար Հայաստանին դարձնում է այդ դիմակայության մասնակից:

ՀԱՊԿ-ի եւ Եվրամիության շրջանակներում առաջացող անորոշության իրավիճակը նույնպես փոխում է Հայաստանի միջազգային գերակայությունները: Հակասական միտումներ են երեւան գալիս Հայաստանի հանդեպ եվրոպական կառույցների քաղաքականության մեջ: Հոկտեմբերի 12-ին Եվրամիության արտաքին գործերի խորհուրդը մանդատ տվեց Եվրահանձնաժողովին՝ նոր իրավական բազայի մասին Հայաստանի հետ բանակցություններ սկսելու համար: Երեւանն ու Բրյուսելը պատրաստվում են նոր պայմանագիր ստորագրել: Այն հիմնվելու է նույն Ասոցացման համաձայնագրի վրա՝ հաշվի առնելով նոր իրողությունները, հատկապես Եվրասիական տնտեսական միությանը Հայաստանի անդամակցությունը:

Խոսքը վիզային պայմանակարգի դյուրացման, քաղաքացիական օդուժի, տնտեսական մրցակցության, թափանցիկության, ներդրումների, ծառայությունների, առեւտրի եւ այլ ոլորտներում համագործակցության մասին է: Նոր պայմանագիրը պետք է հաշվի առնի Հայաստանի անվտանգության հիմնախնդիրը: Դեկտեմբերի 7-ին Բրյուսելում Հայաստանի արտաքին գործերի նախարար Էդվարդ Նալբանդյանն ու արտաքին քաղաքականության եւ անվտանգության հարցերի գծով Եվրամիության գերագույն ներկայացուցիչ ՖեդերիկաՄոգերինին հայտարարեցին նոր համաձայնագրով Հայաստան-ԵՄ բանակցությունների պաշտոնական բացման մասին:

Միաժամանակ իրեն զգալ տվեց բացասական միտումը: Քաղաքական հարցերի հանձնաժողովը ԵԽԽՎ ձմեռային նստաշրջանի օրակարգ էր մտցրել Հայաստանի համար խիստ անցանկալի ձեւակերպումներով երկու բանաձեւ: Մասնավորապես Հայաստանից պահանջում են զորքի դուրսբերում Ադրբեջանի տարածքից՝ ներառյալ Լեռնային Ղարաբաղը: Տվյալ փաստաթղթերն առաջ են բերել նույնիսկ Մինսկի խմբի համանախագահների բացասական վերաբերմունքը: Բայցեւայնպես, ԵԽԽՎ-ի այդօրինակ վերաբերմունքը եվրոպական երկրների քաղաքականությունն անհասկանալի է դարձնում:

Ամեն դեպքում Հայաստանի առջեւ կանգնած է ծագող հիմնահարցերի ամբողջ համալիրի վերաբերյալ նոր դիրքորոշումների մշակման խնդիրը: Ռուսաստանի եւ Թուրքիայի հարաբերությունները ե՛ւ դիմակայության, ե՛ւ բարյացակամության փուլերում միշտ լի են Հայաստանի համար տհաճ անակնկալներով: Նոր պայմաններում իր տեղի ու դերի ճիշտ ընտրությունը թույլ կտա ոչ միայն ապահովել Հայաստանի անվտանգությունը, այլեւ իրագործել պետական բազմաթիվ խնդիրներ:





# Армения в тисках российской политики на Ближнем Востоке

К концу 2015-го года Армения подошла в радикально изменившейся международной обстановке. Вход стратегического партнера Армении – России в развернувшуюся в Сирии международную политику по борьбе с терроризмом изменило все приоритеты политики стран-соседей Армении и всего постсоветского пространства. Оказавшись в международной изоляции в связи с кризисом в Украине, Россия почему-то решила сделать резкий поворот в своей внешней политике. Президент России В. Путин заявил: для проведения операции против террористов в Сирии может быть только два основания — резолюция Совбеза ООН или просьба официальных властей этой страны. На повестку Совета безопасности ООН Россией в конце сентября с.г. был внесен проект резолюции по Сирии, который был отвергнут Францией и раскритикован со стороны США. Быстро сработал второй вариант легального входа России в Сирию. Президент Сирии Башар Асад попросил власти России предоставить ему военную помощь в борьбе с оппозиционными войсками, а также с террористической группировкой ИГИЛ. 30 сентября Совет Федерации России по просьбе президента В. Путина дал ему разрешение на использование Вооруженных сил РФ за рубежом.

Главным вопросом после входа России в Сирию стал вопрос о том, был ли такой шаг согласован с западными державами, или Россия сделала демарш на фоне формирования международной коалиции по борьбе с терроризмом? Но уже в первые дни стало ясным, что действия России укладывались в настрой Запада. Главным свидетельством этого стало то, что в течение нескольких дней была относительно заморожена ситуация в Украине. А дальше пошли открытые заявления лидеров международной коалиции о том, что Россия может быть очень важным игроком по решению сирийского кризиса, если будет концентрироваться на борьбе с «Исламским государством», а не на поддержке президента Сирии Асада.

Каковы были планы самой России при входе в сирийский кризис, можно только предполагать, но взрыв российского пассажирского лайнера над Синайским полуостровом и теракт в Париже очень быстро сделали роль России центральной в политике по борьбе с терроризмом. Предложение президента Франции о формировании совместной с Россией коалиции изменило логику процесса консолидации стран. Выявились страны, отвергающие такое развитие событий. В первую очередь, Турция. Можно было ожидать осложнения отношений последней с Россией. Поводом стал инцидент с российским бомбардировщиком Су-24М, сбитым турецкими летчиками на границе с Сирией 24 ноября. Россия и Турция встали на грань военной конфронтации, а весь остальной мир получил груз совершенно новых глобально значимых проблем, определивших логику политического дальнейшего развития международных отношений.

# Հայաստանի ներքաղաքական զարգացումների տրամաբանությունը

**Ուժերի դասավորությունը տարեսկզբին**

2011 թվականին Լեւոն Տեր-Պետրոսյանի «քաղաքագիտական վերլուծությամբ» սկզբնավորված՝ ՀԱԿ-ի ու ԲՀԿ-ի համատեղ գործելու, ռեսուրսները համախմբելու ուղեգիծը 2014-ին հանգեցրեց Հայաստանի քաղաքական դաշտում խորհրդարանական նաեւ այլ ուժերի՝ ՀՅԴ եւ «Ժառանգություն» կուսակցությունների ընդգրկմանն այդ համագործակցության մեջ: «Քառյակի» ձեւաչափից ՀՅԴ-ի դուրս գալուց հետո Հայաստանի քաղաքական կյանքում գործակցող մյուս երեք կուսակցությունների ջանքերն արդեն 2015թ. սկզբին, ըստ նրանց հրապարակային հայտարարությունների, հետապնդում էին Սերժ Սարգսյանի վարչակարգի դեմ պայքարելու ունակ բոլոր ռեսուրսների միավորմանը եւ վերջինիս հեռացմանը հասնելու նպատակ: Գործող վարչախմբի եւ «ոչիշխանական» երեք ուժերի միջեւ ծավալված պայքարը փետրվար ամսին մտավ ավարտական փուլ: Սահմանադրական փոփոխությունների նախօրոք հայտարարված գործընթացը քաղաքական ուժերի լայն կոնսոլիդացման ներքո անցկացնելու նկատառումից ելնելով՝ վարչախումբը հարկ համարեց չսպասել ընդդիմադիր ուժերի կողմից իրադարձությունների հետագա սրացմանը եւ ինքը նախաձեռնեց ու հանգուցալուծեց առկա լարվածությունը:

**Հայկական «Իվանիշվիլիի» միֆը**

«Եռյակի» քաղաքական ակտիվությունը լիարժեք տապալելու համար առիթ ծառայեց ԲՀԿ քաղխորհրդի անդամ, «Կասեցում» նախաձեռնության ակտիվիստ Արտակ Խաչատրյանի հետ կապված դեպքը: Արտակ Խաչատրյանին փետրվարի 7-ի առավոտյան անհայտ անձինք առեւանգել էին, իսկ ժամեր անց նա հայտնաբերվել էր ծեծված վիճակում: Փետրվարի 9-ին Կառավարության շենքի մոտ տեղի ունեցավ բողոքի ակցիա ի պաշտպանություն Արտակ Խաչատրյանի՝ «Մենք բոլորս Արտակ Խաչատրյան ենք» կարգախոսով: ԲՀԿ-ն հայտարարեց, որ քաղաքական իշխանությունը որդեգրել է դարանակալած առեւանգման, թիկունքից հարվածելու, ծեծի թուլամորթ գործելաոճը եւ կոչ արեց իր գրասենյակների ներկայացուցիչներին ու ակտիվիստներին՝ կտրուկ աշխուժացնել աշխատանքները տեղերում՝ համաժողովրդական ընդվզման միասնական օր անցկացնելու համար:

Փետրվարի 12-ին կայացավ ՀՀԿ Գերագույն մարմնի նիստը, որտեղ Սերժ Սարգսյանը հանդես եկավ «ծրագրային» ելույթով, որն ամբողջովին նվիրված էր ԲՀԿ առաջնորդ, հայտնի օլիգարխ Գագիկ Ծառուկյանին եւ նրա քաղաքական գործունեությանը: Սարգսյանի քայլը շրջադարձային դարձավ Հայաստանի ներքաղաքական կյանքում: Բացահայտ սպառնալիքներով, մեղադրանքներով ուղեկցված այդ ելույթը ուղիղ մարտահրավեր էր «Եռյակի» նախաձեռնած շարժմանը, ինչի պատասխանն իրեն երկար սպասել չտվեց:

Փետրվարի 13-ին ԲՀԿ քաղխորհրդի նիստում Գագիկ Ծառուկյանը, ում ՀԱԿ առաջնորդ, ՀՀ առաջին նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանը զուգադրել էր Վրաստանի քաղաքական կյանքում մեծ դեր խաղացած ձեռնարկատեր, բարեգործ Բիձինա Իվանիշվիլիին, հանդես եկավ պատասխան ելույթով: Նա արձագանքեց ստեղծված իրավիճակին եւ կոչ արեց համազգային մոբիլիզացման՝ «ունենալով մեկ նպատակ՝ քաղաքական բոլոր օրինական միջոցներով (անդադար հանրահավաքներ, երթեր, ցույցեր, անհնազանդություն եւ այլն) հասնել Սերժ Սարգսյանի պաշտոնանկությանը՝ ազատվելու համար չարիքի այս իշխանությունից»: ԲՀԿ քաղխորհրդի նիստին անմիջապես հաջորդեցին Գագիկ Ծառուկյանի հանդիպումները ՀԱԿ առաջնորդ Լեւոն Տեր-Պետրոսյանի եւ «Ժառանգության» ղեկավար Րաֆֆի Հովհաննիսյանի հետ: Հայտնի դարձավ, որ այս ձեւաչափի քննարկումները շարունակվելու են եւս մեկ-երկու օր, որից հետո «Եռյակը» հանրությանն է ներկայացնելու հետագա անելիքները:

Փետրվարի 15-ին արդեն տեղի ունեցավ «Բարգավաճ Հայաստան», ՀԱԿ, «Ժառանգություն» կուսակցությունների առաջնորդների հանդիպումը՝ պատվիրակությունների ընդլայնված կազմերով: Հանդիպման ընթացքում քննարկվեց Հայաստանում ստեղծված ներքաղաքական արտակարգ իրավիճակը: Որոշում կայացվեց փետրվարի 20-ին Ազատության հրապարակում շտապ հրավիրել համազգային հավաք՝ ՀՀ քաղաքացիների հետ միասին ստեղծված իրավիճակի հանգուցալուծման որոշում ընդունելու համար:



Սակայն քաղաքական իրավիճակը շատ արագ փոխվեց, եւ Սերժ Սարգսյան-Գագիկ Ծառուկյան հակամարտությունը շատերի համար անսպասելի ելք ունեցավ: ՀՅԴ միջնորդությամբ տեղի ունեցավ Սարգսյանի ու Ծառուկյանի անդրկուլիսյան հանդիպում, որից հետո վերջինս հայտարարեց այլեւս քաղաքական գործունեություն ծավալելու ցանկության բացակայության մասին: ԲՀԿ-ն սկսեց կազմալուծվել՝ իր փլատակների տակ թողնելով նաեւ «Եռյակի» համակիրների՝ երկրում իշխանափոխություն տեսնելու հույսերը:

**Կուսակցությունների համախմբման միջոցով դեպի սահմանադրական փոփոխություններ**

Գործող վարչախումբը՝ պատեհ առիթ համարելով ԲՀԿ կազմալուծմամբ քաղաքական դաշտում առաջացած վակուումը, մարտ ամսից մեծ թափով լծվեց սահմանադրական փոփոխությունների գործընթացն ավարտին հասցնելու եւ երկրի կառավարման համակարգը ըստ իր ծրագրերի վերափոխելու գործին: Այդ գործընթացի շրջանակներում Սերժ Սարգսյանը մարտի 12-ին հանդիպեց «Օրինաց երկիր», «Ժառանգություն», Միավորված աշխատանքային, «Բարգավաճ Հայաստան», Հայոց համազգային շարժում, «Ազատ դեմոկրատներ» կուսակցությունների ներկայացուցիչների հետ: Ավելի վաղ նա հանդիպել էր Հայ Յեղափոխական Դաշնակցության ներկայացուցիչների հետ:

Նույն օրը երեկոյան քննարկումները շարունակվեցին ՀՀԿ գործադիր մարմնի ընդլայնված նիստում, որին մասնակցեցին նաեւ «Հայաստանի քրիստոնեա-դեմոկրատական միություն», «Սահմանադրական իրավունք միություն» եւ «Ազգային միաբանություն» կուսակցությունների ներկայացուցիչները: Այդ հանդիպումներից հետո՝ մարտի 13-ին, Սերժ Սարգսյանը հանդիպեց նաեւ ՀՀ նախագահին առընթեր սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողովի անդամների հետ եւ ներկայացրեց հանձնաժողովի կողմից մշակված սահմանադրական բարեփոխումների հայեցակարգի վերաբերյալ իր տեսակետը: Մասնավորապես նա հարկ համարեց նկատել, որ սահմանադրական բարեփոխումների հայեցակարգի վերաբերյալ որոշում կայացնելու համար ինքը հանդիպումներ է ունեցել Հայաստանի քաղաքական դաշտի հիմնական դերակատարների մեծ մասի հետ: «Ես շարունակում եմ մնալ այն կայուն կարծիքին, որ մեր երկրի համար սահմանադրական բարեփոխումներն իսկապես կարեւոր են եւ դրանք կարող են իրականացվել միայն լայն քաղաքական կոնսոլիդացման պայմաններում: Միեւնույն ժամանակ քաղաքական ուժերի հետ անցկացված խորհրդատվությունները ցույց են տալիս, որ այս հարցում չկան եւ օբյեկտիվորեն չեն կարող լինել միանշանակ համընկնող մոտեցումներ. կան կառավարման խորհրդարանական համակարգին թե՛ կողմ եւ թե՛ դեմ արտահայտվողներ, կան նաեւ ուժեր, որոնք վերջնական կողմնորոշում ունենալու համար կարեւորում են իրենց մասնակցությունն այս գործընթացին, եւ այսպիսի ուժերը շատ ավելի մեծաթիվ են: ... Սկսվում է աշխատանքի նոր, ավելի բարդ ու ծավալուն, միեւնույն ժամանակ՝ պատասխանատու փուլ: Վստահ եմ, որ մենք ամիսներ անց ունենալու ենք հստակ մոտեցումներով ու լուծումներով փաստաթուղթ»,- նշել էր Սարգսյանը:

Իբրեւ ապացույց առ այն, որ կայացել է քաղաքական լայն կոնսոլիդացում սահմանադրական փոփոխությունների գործընթացի շուրջ, արդեն մարտի 14-ին Սերժ Սարգսյանը հավանություն տվեց ՀՀ նախագահին առընթեր սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողովի կողմից Հայաստանի Հանրապետության նախագահին ներկայացված սահմանադրական բարեփոխումների հայեցակարգին: Սարգսյանի որոշման համաձայն՝ ՀՀ նախագահին առընթեր սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողովը այդուհետ քաղաքական կուսակցությունների հետ պետք է կազմակերպեր ու իրականացներ քննարկումներ սահմանադրական բարեփոխումների հայեցակարգում ամրագրված մոտեցումների կենսագործման վերաբերյալ եւ ամփոփեր կուսակցությունների ներկայացրած առաջարկություններն ու դիտողությունները:

**«ԱՅՈ՞», թե՞ «ՈՉ»: Ներքաղաքական պայքար սահմանադրական փոփոխությունների անվան տակ**

Չնայած այն հանգամանքին, որ սահմանադրական փոփոխությունների գործընթացը ավարտին հասցնելու հա-

մար գործող վարչախմբին հաջողվել էր չեզոքացնել կամ իր կողմը գրավել կուսակցությունների մեծ մասին, այնուամենայնիվ հանրության դժգոհությունները սկզբնապես կարողացան մեկտեղվել ու ինստիտուցիոնալացվել «Ոչ» անվանումը ստացած եւ ընդդեմ վարչախմբի գործող ճակատում: Սեպտեմբերի 12-ին տեղի ունեցավ «Չե՛ք անցկացնի» քաղաքացիական նախաձեռնության կողմից հրավիրված «Ոչ»-ի ճակատի համաժողովը, որին մասնակցում էին ՀՀ սահմանադրական փոփոխություններին դեմ հանդես եկող կուսակցությունների ու քաղաքացիական նախաձեռնությունների ներկայացուցիչները: «Ոչ»-ի ճակատը համաժողովի ժամանակ ընդունեց համատեղ հայտարարություն, ըստ որի նպատակ դրվեց կասեցնել սահմանադրական փոփոխության գործընթացը եւ իշխող վարչախմբի վերարտադրությունը: Հայտարարությունը ստորագրեցին ՀԱԿ, «Ժառանգություն», ՀԺԿ, ԱԻՄ, «Հայազն» կուսակցությունները, «Հիմնադիր խորհրդարան», «Ոչ թալանին» նախաձեռնությունները, «Արմատ», «Մարտի 1», «Ազատություն եւ ժողովրդավարություն» եւ հասարակական ու քաղաքական այլ կազմակերպություններ:

Սակայն սահմանադրական փոփոխությունների հանրաքվեին ընդառաջ մեկ ամիս անց այդ ճակատը կամացկամաց սկսեց տարրալուծվել ու առարկայանալ երկու տարբեր դաշինքների ձեւով: Հոկտեմբերի 12-ին Րաֆֆի Հովհաննիսյանը եւ Ժիրայր Սեֆիլյանը հայտարարեցին համատեղ պայքարի մասին՝ ձեւավորելով ընդդիմության միասնական շտաբ՝ «Նոր Հայաստան» հանրային փրկության ճակատ անվանումով: Այդ միավորմանը հետագայում միացան նաեւ «Ոտքի՛, Հայաստան» քաղաքացիական նախաձեռնությունը, «Հիմնադիր խորհրդարան»-ը, Քաղաքագետների միության նախագահ Հմայակ Հովհաննիսյանը, «Ժողովրդավարական հայրենիք», «Ժառանգություն» կուսակցությունները, ինչպես նաեւ «Ազգային ինքնորոշում միավորում»-ը (ԱԻՄ)՝ դիտորդի կարգավիճակով: Դրանից հետո՝ հոկտեմբերի 19-ին, կազմավորվեց նաեւ «Ոչ»-ի համատեղ շտաբը՝ ընդդեմ սահմանադրական փոփոխությունների գործող ՀԱԿ-ի եւ ՀԺԿ-ի գլխավորությամբ: Մարզային մի շարք հանդիպումներից հետո երկու միավորումներն իրենց ուշադրությունը կենտրոնացրին վերջին շաբաթվա ընթացքում Երեւանում առավել ակտիվություն ցուցաբերելու եւ հանրությանը դեպի իրենց տրամադրելու վրա:

Դեկտեմբերի 1-ին Ազատության հրապարակում «Նոր Հայաստան» միավորումը հրավիրեց հանրահավաք: Վարչախումբը դիմեց հանրահավաքը խոչընդոտելու տարաբնույթ միջոցների: Մասնավորապես, օրվա ընթացքում կանգնեցվեց մարզերից դեպի Երեւան հասարակական տրանսպորտի աշխատանքը, մի քանի անգամ խոչընդոտվեց բուն քաղաքական ակցիան: Հաջորդ օրերին «Նոր Հայաստան» միավորումը շարունակեց հանրությանը համախմբելու ակցիաներ իրականացնել՝ որպես պայքարի ճանապարհ առաջարկելով հանրաքվեին մասնակցելու փոխարեն գործող վարչախմբի տապալումը փողոցում անցկացնելու տեսլականը:

Միաժամանակ «Ոչ»-ի միավորումը Ազատության հրապարակում իր գլխավոր հանրահավաքն անցկացրեց դեկտեմբերի 3-ին: Իր ելույթում ՀԱԿ փոխնախագահ, «Ոչ»-ի շտաբի պետ Լեւոն Զուրաբյանը հայտարարեց, որ «ՀԱԿ-ի եւ ՀԺԿ-ի համատեղ շտաբը շատ լավ գիտի իր անելիքներն ու ծրագիրը, եւ այն անշեղորեն իրագործելու է: «Մենք իսկապես մշակել ենք այնպիսի ծրագիր, որը հաղթանակող պայքարի ծրագիր է: Բոլորից խնդրում եմ զինվել համբերությամբ, համառությամբ եւ իմանալ՝ հաղթում է նա, ով հետեւողական ու համառ է»,- հայտարարեց Զուրաբյանը:

Դեկտեմբերի 6-ին Հայաստանում կայացած հանրաքվեն առանձնացավ կոպիտ խախտումներով: Ընտրակաշառքի բաժանումը, բազմակի քվեարկությունը, տեղամասերում «Այո»-ի օգտին լցոնումներն ու արձանագրությունների կեղծումը համատարած բնույթ էին կրում: Ըստ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի ներկայացրած նախնական արդյունքների՝քվեարկելու իրավունք ունեցող քաղաքացիների ընդհանուր թիվը եղել է 2 միլիոն 567 հազար 047, քվեարկությանը մասնակցել են 1 միլիոն 303 հազար 466 քաղաքացիներ: Անվավեր է ճանաչվել 53 հազար 332 քվեաթերթիկ, «այո» է քվեարկել 825 հազար 851 մարդ, «ոչ»՝ 421 հազար 600:

Սահմանադրական փոփոխությունների դեմ հանդես եկող ճակատները՝ որպես իրենց գործունեության վերջին արար, ընտրությունների հաջորդ օրը՝ դեկտեմբերի 7-ին, Ազատության հրապարակում հրավիրեցին հանրահավաք: Հանրահավաքում ներկայացնելով հանրաքվեի ընթացքում գործող վարչախմբի հանցավոր գործունեության փաստերը՝ այնուհետեւ կազմակերպիչները հանրությանը հրավիրեցին ավանդական երթի, որից հետո իրենց համակիրներին ճանապարհ դրեցին տուն: Նույն ժամին ՀՀ նախագահի նստավայրում Սերժ Սարգսյանը՝ հյուրընկալելով բազմաթիվ պաշտոնատար անձանց, հասարակական եւ քաղաքական գործիչների, հանդես եկավ ելույթով: Նա նշեց, որ «Ոչ»-ի կողմնակիցներից շատերն իրենք իրենց մասին որպես «ճակատ» էին խոսում, սակայն ինքը փորձել է որքան հնարավոր է խուսափել այդ բառից: «Մենք պատրաստ ենք ամենաբաց եւ ամենաընդգրկուն քննարկումների բոլոր հնարավոր ձեւաչափերում, որպեսզի ի վերջո ընդունենք նոր՝ լավագույն Ընտրական օրենսգիրքը: Մենք պատրաստ ենք քննարկել թափանցիկության ու վստահության ապահովող ցանկացած մեխանիզմ: Հուսով եմ, որ մեր ընդդիմախոսները կընդունեն այս հրավերը եւ մեզ հետ հավասար կլծվեն այս կարեւոր աշխատանքին»,- նշել էր Սարգսյանը՝ կրկին դուռ բացելով ընդդիմացող կուսակցությունների առջեւ՝ վարչախմբի հետ գործարքների ու պայմանավորվածությունների գնալու համար:


VISIT OUR WEBSITE



www.acnis.am

- About Us
- Full Activity
- Calendar
- Articles
- Publications

- Մեր մասին
- Գործունեություն
- Օրացույց
- Հոդվածներ
- Հրատարակություններ

JOIN THE CENTER'S STRATEGIC PARTNERS




# «Էլեկտրիկ Երեւան»՝ քաղաքացիական անհնազանդության հայաստանյան օրինակ

**«Էլեկտրիկ Երեւանի» ձեւավորման առիթը եւ բողոքի սկիզբը**

2015 թվականի հունիսի 17-ին ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը որոշում ընդունեց բարձրացնել էլեկտրաէներգիայի սակագինը: Այդ որոշումը առիթ հանդիսացավ, որ բազմաթիվ քաղաքացիներ իշխանությունների նկատմամբ կուտակված դժգոհությունը հերթական անգամ բարձրաձայնելու ու որոշումը չեղարկելու նպատակով կազմակերպեն բողոքի երկարաբատեւ ակցիաներ՝ հանրահավաքներ, երթեր, ավտոերթեր, նստացույցեր:

Բողոքի ալիքը բարձրացվեց այն ժամանակ, երբ հունիսի 17-ին «Ոչ թալանին» քաղաքացիական նախաձեռնության կողմից կազմակերպված բազմամարդ հանրահավաքի ժամանակ իշխանություններից պահանջվեց մինչեւ հունիսի 22-ը չեղյալ համարել սակագնի բարձրացման մասին համապատասխան հանձնաժողովի որոշումը եւ նշվեց, որ հակառակ դեպքում ցուցարարները երթով կշարժվեն դեպի Նախագահի նստավայր:

***Դեպի «Բաղրամյան» առաջին երթը եւ վարչախմբի պատասխանը***

Իրավիճակը թեժացավ հունիսի 22-ին, երբ ավարտվեց իշխանություններին տրված վերջնաժամկետը: Քանի որ իշխանությունները անհաղորդ էին մնացել բողոքող հանրության պահանջներին, ցուցարարները, ինչպես խոստացել էին, որոշեցին շարժվել դեպի Նախագահի նստավայր: Բաղրամյան պողոտայի սկզբնամասում հանդիպելով ոստիկանական պատնեշին, երթի մասնակիցները որոշեցին հենց տեղում նստացույց սկսել եւ այդկերպ իրականացնել իրենց բողոքի գործողությունը: Ոստիկանությունը ակցիան համարեց անօրինական եւ հորդորեց դադարեցնել այն: Սակայն ակտիվիստները չհնազանդվեցին ոստիկանության պահանջներին, իսկ իրավապահները՝ բազմիցս նշելով, որ դադարեցնելու են նստացույցը, եթե ցուցարարները ինքնակամ դա չանեն, այդ օրը այդպես էլ չիրականացրին իրենց սպառնալիքը:

Հունիսի 22-ին ոստիկանությունը փորձեց նաեւ այլ, միջնորդական գործառույթ իրականացնելու միջոցով ազատել

Բաղրամյան պողոտան: Ցուցարարները տեղեկացվեցին, որ ՀՀ ոստիկանապետ Վլադիմիր Գասպարյանը ցուցարարներին առաջարկել է կազմել 3-4 հոգանոց խումբ եւ երաշխավորել, որ հանրապետության նախագահը կընդունի նրանց եւ կլսի նրանց պահանջները: Ցուցարարները հրապարակային քննարկումներից հետո մերժեցին վերոնշյալ առաջարկը, իսկ ոստիկանությունը հունիսի 23-ի առավոտյան ուժի, այդ թվում՝ ջրցան մեքենայի կիրառմամբ ցրեց նստացույցը, եղան բազմաթիվ բերման ենթարկվածներ, հարուցվեց քրեական գործ խուլիգանության հատկանիշով:

### Բողոքի ընդլայնումը եւ Բաղրամյան պողոտայի երկարաժամկետ նստացույցի մեկնարկը

Ոստիկանության գործողությունների համաչափության վերաբերյալ, ի թիվս այլոց, իրենց մտահոգությունը հայտնեցին ինչպես հայաստանյան իրավապաշտպանները, այդ թվում՝ ՀՀ օմբուդսմենը, այնպես էլ մի շարք միջազգային կառույցների եւ Արեւմուտքի պետությունների ներկայացուցիչներ: Իշխանությունների վերոնշյալ գործողությունները, կարծես, էլ ավելի բորբոքեցին բողոքող քաղաքացիներին՝ նրանց թիվն աճեց, որոշման կասեցման պահանջին ավելացավ նաեւ ցուցարարների նկատմամբ անհամաչափ ուժի կիրառման պատասխանատուներին եւ իրականացնողներին պատժի ենթարկելու պահանջը, կարգախոսներն էլ ավելի կոշտացան:

Ցուցարարները հունիսի 23-ի երեկոյան դուրս եկան փողոց եւ նորից շարժվեցին դեպի Նախագահի նստավայր, որտեղ նրանց կրկին դիմավորեց ոստիկանական պատնեշը: Անհնազանդ քաղաքացիները որոշեցին անժամկետ նստացույց անել: Այս անգամ ոստիկանությունը, թեեւ բազմաթիվ անգամ զգուշացրեց, որ դադարեցնելու է հավաքը, այդպես էլ ի կատար չածեց իր սպառնալիքը: Ցուցարարները, որոնց թվում էին տարբեր ընդդիմադիր քաղաքական ուժերի, քաղաքացիական նախաձեռնությունների, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ եւ ուղղակի ակտիվ քաղաքացիներ, երկու շաբաթ շարունակ յուրօրինակ փառատոնային մթնոլորտի խորապատկերին շուրջօրյա նստացույց եւ երթեր իրականացրին՝ այդպիսով կյանքի կոչելով քաղաքացիական անհնազանդության յուրօրինակ ակցիաների ամբողջ մի շարան: Նստացույցի հետ կապված հետաքրքրական, նորարար, սակայն ցուցարարների կողմից ոչ միանշանակ վերաբերմունքի արժանացած մի երեւույթ էր՝ քաղաքական գործիչներից եւ շոու բիզնեսի ներկայացուցիչներից բաղկացած, այսպես կոչված, «կենդանի պատն» էր, որը ստեղծվել էր ցուցարարների եւ ոստիկանության միջեւ հնարավոր բախումներից խուսափելու համար:

### «Էլեկտրիկ Երեւանի» կարգախոսները եւ անհնազանդության արշավի որոշ հատկանիշները

Պետք է նշել, որ ակցիաների ընթացքում հնչող կարգախոսներից, այն է՝ «Մենք ենք տերը մեր երկրի», «Որոշողը մենք ենք», «Ազատ, Անկախ Հայաստան» եւ դրանց համահունչ բովանդակությամբ ելույթներից ու ներկայացված պահանջներից հստակ երեւում էր, որ քաղաքացիների բողոքի բնույթը զուտ սոցիալ-տնտեսական չէ, որ բողոքն ունի հստակ քաղաքական բովանդակություն: Ցուցարարները ոչ միայն վրդովված էին այն բանից, որ էլեկտրաէներգիայի սակագինը բարձրացնելու որոշման արդյունքում կյանքը, ընդհանուր առմամբ, թանկանալու է, այլ նաեւ պնդում էին, որ սակագնի բարձրացման որոշումն անհիմն է եւ պայմանավորված է երկրում առկա համակարգային կոռուպցիայով: Ցուցարարներից շատերը համոզված էին, որ ռուսական «ԻՆՏԵՐ ՌԱՕ ԵԷՍ» ՓԲԸ-ի կողմից ստեղծված, Հայաստանում էլեկտրաէներգիայի բաշխմամբ եւ իրացմամբ զբաղվող «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ընկերությունը եւ հայաստանյան իշխանությունները հանցավոր գործարքի մեջ են, ինչի հետեւանքով էլ ընդունվել է սակագնի բարձրացման որոշումը: Քաղաքացիները բողոքում էին երկրում առկա քաղաքական եւ տնտեսական մենաշնորհներից, անարդյունավետ կառավարումից, անարդարությունից:

«Էլեկտրիկ Երեւան» անվանումը ստացած քաղաքացիական արշավի հատկանիշներից մեկն էլ երիտասարդական եռանդով, հումորով, երգիծանքով հագեցած մթնոլորտն էր: Պետք է նշել, որ, չնայած բողոքի ցույցերի համակարգողների հասցեին հաճախ հնչում էր քննադատություն առ այն, որ նրանք չունեն որոշումների կայացման հստակ գործիքակազմ, ռազմավարություն, մարտավարություն, հստակ գործողությունների ծրագիր, այնուամենայնիվ, Բաղրամյանում տեղի ունեցող իրադարձությունները վայելում էին հանրության զգալի հատվածի համակրանքը, «Էլեկտրիկ Երեւանը» դարձել էր համաշխարհային ԶԼՄ-երի ուշադրության առարկա:

### Իշխող վարչախմբի արձագանքը եւ «Էլեկտրիկ Երեւանի» պատասխանը

Իշխող վարչախումբն, ի վերջո, արձագանքեց տեղի ունեցող իրադարձություններին կոնկրետ որոշմամբ: Սերժ Սարգսյանը հունիսի 27-ին ազդարարեց, որ սակագնի բարձրացումն արդարացված է, սակայն միջազգային աուդիտի կենթարկվի «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ընկերությունը, եւ այդ ընթացքում կառավարությունն իր վրա կվերցնի սակագնի բարձրացման ամբողջ բեռը:

Ցուցարարներից շատերը իշխանությունների այս որոշումը դիտարկեցին որպես հանրության բողոքը հանգցնելու նպատակով իրականացվող մեքենայություն, ոմանք էլ համարեցին, որ սա առավելագույնն էր, ինչին այդ պահի դրությամբ հնարավոր էր հասնել: Ինչեւէ, պողոտայում որոշվեց, որ Բաղրամյանում գտնվող հանրությունը կորոշի՝ շարունակել մնալ պողոտայում, թե ոչ: Այնուամենայնիվ, «Ոչ թալանին» նախաձեռնության՝ հանրությանն ամենից շատ հայտնի ակտիվիստները մի խումբ աջակիցների հետ հունիսի 28-ին ինքնակամ գնացին Ազատության հրապարակ, որպեսզի այնտեղ շարունակեն իրենց բողոքը, այնինչ ցուցարարների մեծամասնությունը, այդ թվում նախաձեռնության համակարգող խմբի մի քանի ներկայացուցիչներ մնացին Բաղրամյան պողոտայում:

Բայցեւայնպես, մի շարք պատճառներով, որոնց վերլուծությունն առանձին ուսումնասիրության թեմա կարող է լինել, բողոքը գնալով սակավամարդ էր դառնում եւ այն կարգավորելու պատասխանատվություն ստանձնած նոր համակարգողները, թեպետ փորձեցին որոշակի լիցք հաղորդել շարժմանը, սակայն սակավաթիվ դարձած ցուցարարներին ոստիկանները հուլիսի 6-ին միայն ֆիզիկական ուժի կիրառմամբ դուրս հանեցին Բաղրամյան պողոտայից:

*Թեեւ «Էլեկտրիկ Երեւանը» չհասավ իր հիմնական նպատակին, այն է՝ հայտնի որոշման չեղարկմանը, սակայն այն փաստը, որ երկու շաբաթ շարունակ Բաղրամյան պողոտան փակ մնաց, քաղաքացիական նախաձեռնության կողմից կազմակերպված բողոքը դարձավ ոչ միայն Հայաստանի, այլեւ համաշխարհային նշանակության իրադարձություն: Այդ ամենի արդյունքում վարչախումբը գնաց ինչ-որ զիջման, որը, ճիշտ է, չգոհացրեց ցուցարարներին, բայց վկայում է այն մասին, որ բազմաթիվ թերի կողմերի առկայությամբ հանդերձ, «Էլեկտրիկ Երեւանը» նշանակալի իրադարձություն էր Հայաստանի քաղաքական, քաղաքացիական կյանքում: Ակնհայտ է, որ հետագայում այն կունենա իր դրական ազդեցությունը:*






## Կարինը, Ալեքը եւ ՌԱՀՀԿ-ը «1915»-ը ներկայացրին Վանում

«Վանա լճի» միջազգային կինոփառատոնի փակման գիշերը «1915» հոգեբանական թրիլլերը խլացնող ծափահարությունների արժանացավ ցուցադրությանը ներկա քուրդ եւ թուրք հանդիսատեսի կողմից եւ դեկտեմբերի 11-ին Վանի կենտրոնում տեղի ունեցած արարողության ժամանակ շահեց ժյուրիի հատուկ մրցանակը: Կարին Հովհաննիսյանի եւ Ալեք Մուհիբյանի համահեղինակությամբ ստեղծված ֆիլմը ցուցադրման նախաշեմին հայտնվել էր հակասությունների կենտրոնում, քանի որ տեղական հակահայկական խմբերը դատապարտում էին փառատոնը եւ սպառնում փառատոնի կազմակերպիչներին՝ Արեւելյան Թուրքիայի իրական դեմքը ցույց տվող նման կինոնկար ներկայացնելու համար:

Հայաստանի առաջին արտգործնախարար ու Ռազմավարական եւ ազգային հետազոտությունների հայկական կենտրոնի (ՌԱՀՀԿ) հիմնադիր տնօրեն Րաֆֆի Կ. Հովհաննիսյանի գործադիր պրոդյուսերությամբ, հանրահայտ Սիմոն Աբգարյանի եւ Անժելա Սարաֆյանի գլխավոր դերակատարությամբ եւ Սերժ Թանկյանի ինքնատիպ երաժշտությամբ ստեղծված այս ֆիլմը տուրք է 1915թ. Հայոց ցեղասպանության ժառանգությանը: (Ֆիլմը բեռնելու եւ այլ լրացուցիչ տեղեկությունների համար խնդրում ենք այցելել www.1915themovie.com):

Ներկայացնելով ֆիլմը Վանում, Կարին Հովհաննիսյանն անդրադարձել է Թուրքիայի մեկդարյա մերժմանը եւ ասել Հայոց ցեղասպանության մասին իր հզոր խոսքը՝ միեւնույն ժամանակ ճանաչելով քաջությունն այն մտավորականների ու կազմակերպիչների, ովքեր 100 տարի անց նախաձեռնել են նման քննարկում: Աղթամար կղզու Սուրբ Խաչ եկեղեցում «Վան» հեռուստատեսությանը տված հարցազրույցում Հովհաննիսյանն ասել է. «Սա հայոց թագավորության հոգեւոր եւ խորհրդանշական սիրտն է: Այս հողում մենք մեզ օտարական չենք զգում: Մենք կարծես տուն եկած լինենք»:

Քրդերն, իրենց հերթին, ներողություն են խնդրել հայերից՝ քուրդ եւ թուրք ժողովուրդների անունից: Նույնիսկ պետական հեռուստատեսությամբ նրանք չեն խուսափել «Ցեղասպանություն» բառից եւ հավելել են. «Հուսով ենք, որ կարող ենք այստեղ ունենալ ընդհանուր կյանք: Կուզենայինք, որ անցյալը գոյություն չունենա»: Ամբողջ մի շաբաթ նման տրամադրություններ էին թեւածում Վանում, որտեղ այդ հողի հետ հայկական կապերը ճանաչելու շարժումը լավ թափ առավ:

«1915»-ը ստեղծվել է ՌԱՀՀԿ-ի եւ ՌՎՎԶ/IDeA հիմնադրամի հետ համագործակցությամբ:

## GARIN, ALEC, ACNIS TAKE “1915” TO VAN



The closing-night film at the Lake Van International Film Festival, the psychological thriller 1915 received a resounding ovation from the Kurdish and Turkish audience in attendance—and earned the Special Jury Prize at a ceremony in downtown Van on December 11, 2015. The film, co-directed by Garin Hovannisian and Alec Mouhibian, had been at the center of much controversy in the lead-up to the screening, as local anti-Armenian groups condemned the festival and threatened the festival organizer for inviting such a film to what is considered Eastern Turkey.

Executive produced by Raffi K. Hovannisian, Armenia’s first foreign minister and founding director of the Armenian Center for National and International Studies (ACNIS), starring Simon Abkarian and Angela Sarafyan, and featuring an original score by Serj Tankian, the film is a tribute to the legacy of the Armenian Genocide of 1915. (To download the film, or for more information, please visit www.1915themovie.com.)

Representing the film in Van, Garin Hovannisian took on Turkey’s century of denial and spoke out forcefully about the Armenian Genocide—at the same time recognizing the courage of those intellectuals and organizers who have initiated such a discussion 100 years later. In an interview with Van TV at the Holy Cross Church on Akhtamar Island, Hovannisian said: “This is the spiritual and symbolic heart of the Armenian kingdom. We do not feel like strangers in this land. We feel that we have come home.”

The Kurdish interviewers, in their turn, apologized to the Armenian people on behalf of the Kurdish and Turkish peoples. Even on national television, they did not mince words about “the genocide” and added: “We hope that we can have a common life here. We wish the past did not exist.” Similar sentiments were conveyed all through the week in Van, where a movement to recognize the Armenian connection to this land is well under way.

1915 was produced in partnership with ACNIS and the RVVZ/IDeA Foundation.

# Ավետիսյանների ընտանիքի սպանությունը՝ ՌԱՀՀԿ-ի սեմինարի օրակարգում



**19 փետրվարի 2015թ., Երեւան:** Ռազմավարական եւ ազգային հետազոտությունների հայկական կենտրոնը (ՌԱՀՀԿ) այսօր անցկացրեց կլոր սեղանի շուրջ քննարկում, որի թեման առնչվում էր հունվարյան աղմկալի միջադեպերի՝ Գյումրիում Ավետիսյանների ընտանիքի սպանության եւ բերձորյան բռնությունների պատճառներին ու քաղաքական հետեւանքներին: Հրավիրված էին փորձագետ-վերլուծաբաններ, հասարակագետներ, քաղաքացիական եւ հանրային կառույցների ներկայացուցիչներ, լրագրողներ:

Քննարկումը բացեց եւ նրա մասնակիցներին ողջունեց ՌԱՀՀԿ վարչական տնօրեն Կարապետ Կալենչյանը:

«Հայաստանի Հանրապետության ինքնիշխանությանը եւ անվտանգությանն ուղղված նոր մարտահրավերները» թեմայով օրախնդիր զեկույց-վերլուծություն ներկայացրեց ՌԱՀՀԿ հետազոտությունների ղեկավար **Մանվել Սարգսյանը**: ՀՀ անվտանգությանն ու ինքնիշխանությանը սպառնացող թիվ մեկ մարտահրավերը, ըստ նրա, Ադրբեջանի սադրած սահմանային միջադեպերն են, որոնցում ի հայտ են եկել նոր տարրեր, «ինչը հայկական կողմին ստիպել է նույնպես որդեգրել նոր ռազմավարություն՝ խորանալ հակառակորդի տարածք եւ պատասխան գործողությունները տեղափոխել այնտեղ»: Սակայն վտանգը, Սարգսյանի դիտարկմամբ, կարող է գալ ոչ միայն սահմանից, այլեւ այնտեղից, որտեղից ամենաքիչն ես սպասում. գյումրեցի Ավետիսյանների ընտանիքի սպանդը դրա խոսուն վկայությունն է: «Միջադեպից հետո հայ-ռուսական իրավական վեճը վերածվեց ռուսական կողմից՝ արհամարհանքի, իսկ հայկական կողմից՝ անզորության ցուցադրության, մինչդեռ տեղի ունեցածն առնչվում էր ոչ միայն երկրի անվտանգությանն ու ինքնիշխանությանը, այլեւ ազգային արժանապատվությանը»,- ասաց քաղաքագետը՝ հավելելով, որ Գյումրիում տեղակայված ռուսական ռազմական հենակետը, ամենայն հավանականությամբ, ուզում է հեռանալ եւ դրա համար առիթներ է մտմտում:

Պակաս հետաքրքրական չէր քաղաքագետ **Անդրիաս Ղուկասյանի** զեկուցումը, որը նվիրված էր Արցախի Հանրապետության ներքին եւ արտաքին աճող սպառնալիքների լուսաբանմանը: Քաղաքագետի կարծիքով՝ Արցախի անվտանգությանը նպաստող գործոնները՝ մասնավորապես Ռուսաստանի դերը, ԱՄՆ-ի, Ֆրանսիայի ու ԵՄ-ի համապատասխան փաստաթղթերում արձանագրված դրույթները, Մինսկի խումբը, ԵԱՀԿ-ն, համահայկական սատարման գործոնը եւ այլն, վերջին շրջանում նվազման միտումներ են ցույց տալիս: Նույնը վերաբերում է անվտանգության այնպիսի գործոնների արժենվազմանը, ինչպիսիք են ԼՂՀ Սահմանադրությունը, Հռչակագիրը եւ Արցախի իշխանությունների նկատմամբ ժողովրդի վստահությունը: Զեկուցողի համոզմամբ՝ հունվարի 31-ին Բերձորի մոտ տեղի ունեցած միջադեպով, ըստ էության, խախտվեց սահմանադրական կարգը, եւ իշխանությունը չկարողացավ բացատրել խաղաղ ակցիայի մասնակիցների հանդեպ կիրառած բռնի գործողությունները: «Փաստորեն այդ օրն Արցախում կասեցվեցին Սահմանադրության կարեւորագույն հոդվածները: Եվ ամենացավալին այն է, որ ԼՂՀ քաղաքական ուժերը, Ազգային ժողովը ի վիճակի չեղան համարժեք գնահատական տալ կատարվածին, այսինքն՝ խուսափեցին մարդու իրավունքների կոպտագույն ոտնահարման համար պատասխանատվությունից»,- նշեց Ղուկասյանը:

Զույգ զեկուցումների շուրջ ծավալված հարցուպատասխաններին եւ կարծիքների փոխանակությանը մասնակցեցին «Թրանսփարենսի ինթերնեշնլ»-ի հաղորդակցության համակարգող Արթուր Ավթանդիլյանը, Միջազգային եւ անվտանգության հարցերի հայկական ինստիտուտի ղեկավար Ստյոպա Սաֆարյանը, նույն կազմակերպության փորձագետ Արմեն Վարդանյանը, Հիմնադիր խորհրդարանի քարտուղարության անդամ Ալեք Ենիգոմշյանը, քաղաքական վերլուծաբաններ Էդգար Վարդանյանը, Սարո Սարոյանը եւ ուրիշներ:

## ACNIS Discusses the Causes and Consequences of the January Incidents

**19 February 2015**

Yerevan—Today the Armenian Center for National and International Studies (ACNIS) held a round-table discussion the topic of which was related to the January incidents—political causes and consequences of Victims of family murder in Gyumri and Berdzor's violence. Political scientists, expert analysts, politicians, public activists and media representatives were among the invited guests.

ACNIS administrative director Karapet Kalenchian welcomed the participants.

Armenia's sovereignty and security new challenges were discussed by ACNIS director, political scientist Manvel Sargsian who argued that the number one threat to the security and sovereignty is provoked by Azerbaijan. But the danger can come not only from the border, but where you least expect and victims of Gyumri family massacre is the testimony.

Subsequently, an interesting topic about the Artsakh Republic internal and external threats increasing coverage was presented by political scientist Andrias Ghukasyan. According to the speaker, on January 31, in fact, there was violated the constitutional order, and the government was unable to explain the application of violence against peaceful demonstrators.

The discussion participants included political scientist, director of the Armenian Institute of International and Security Affairs (AIISA), Stepan Safaryan, the Founding Parliament member Aleq Yenigomshyan, Transparency International coordinator Artur Avtandilyan, experts Armen Vardanyan, Edgar Vardanyan and Saro Saroyan and others.



## ԴԵՍՊԱՆՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ

**30 նոյեմբերի 2015թ., Երեւան:** Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի առաջին նախարար Րաֆֆի Կ. Հովհաննիսյանը նոյեմբերի 30-ին իր գրասենյակում ընդունեց մի խումբ դեսպանների եւ այլ դիվանագետների:

Հովհաննիսյանը, ով «Ժառանգություն» կուսակցության ղեկավարն է, «Նոր Հայաստան» ճակատի հիմնադիր անդամն ու Ռազմավարական եւ ազգային հետազոտությունների հայկական կենտրոնի հիմնադիր տնօրենը, Հանրապետության ներկա իրավիճակի, Հայաստանի եւ տարածաշրջանի քաղաքական զարգացումների իր տեսլականը հակիրճ ներկայացրեց Եվրոպական Միության դեսպան Պյոտր Սվիտալսկուն, ԵԱՀԿ դեսպան Անդրեյ Սորոկինին, Գերմանիայի դեսպան Բերնհարդ Մաթիաս Քիսլերին, Մեծ Բրիտանիայի դեսպան Ջուդիթ Մարգարեթ Ֆարնվըրթին, ԱՄՆ դեսպան Ռիչարդ Միլսին, Իտալիայի դեսպան Ջիովանի Ռիչիուլիին, Լեհաստանի դեսպան Եժի Մարեկ Նովակովսկուն, Շվեյցարիայի դեսպան Լուկաս Գասսերին, Չեխիայի դեսպան Պետր Միկիսկային եւ Ճապոնիայի դեսպանի խորհրդական Քենիչիրո Սասամիին:

Բազմաշերտ տեսակետների ու վերլուծությունների փոխանակում տեղի ունեցավ կլոր սեղանի շուրջ կայացած քննարկման ժամանակ:

Նույն օրը Րաֆֆի Հովհաննիսյանը հանդիպել է Իրանի Իսլամական Հանրապետության դեսպան Սեյեդ Քազեմ Սաջադիին:

Քննարկումների ընթացքում Հովհաննիսյանին ուղեկցում էին «Նոր Հայաստան» ճակատի ներկայացուցիչներ Գարեգին Չուգասզյանը, Արմեն Մարտիրոսյանը եւ Հովսեփ Խուրշուդյանը:

## RAFFI HOVANNISIAN MEETS ARMENIA-ACCREDITED AMBASSADORS

**30 November 2015**

Yerevan—Raffi K. Hovannisian, independent Armenia's first minister of foreign affairs, received a group of ambassadors and other diplomats at his headquarters here on November 30.

Hovannisian, who serves as chairman of the Heritage Party, founding member of the New Armenia Front, and founding director of the Armenian Center for National and International Studies, briefed European Union Ambassador Piotr Switalski, OSCE Ambassador Andrey Sorokin, German Ambassador Bernhard Matthias Kiesler, United Kingdom Ambassador Judith Margareth Farnworth, US Ambassador Richard Mills, Italian Ambassador Giovanni Ricciulli, Polish Ambassador Jerzy Marek Nowakowski, Swiss Ambassador Lukas Gasser, Czech Ambassador Petr Mikyska, and Japanese Counselor Kenichiro Sasame on the current state of the Republic and political developments in and around it.

A multidisciplinary exchange of views and analyses ensued in a round-table setting.

On the same day, Raffi Hovannisian held a separate meeting with Iranian Ambassador Seyed Kazem Sadjadi.

During these discussions Hovannisian was joined by New Armenia Front representatives Garegin Chookaszian, Armen Martirosian, and Hovsep Khurshudian.




# Հարյուր տարվա աքսորը

## Կարին Հովհաննիսյանի հոդվածը *The Atlantic* ամսագրում

*(հատված)*

# One Hundred Years of Exile

## by Garin Hovannisian

Two generations after his grandfather fled mass slaughter, California-born Raffi Hovannisian returned to Armenia—and ran for president.

On Inauguration Day 2013, a few minutes after 12 p.m., Raffi Hovannisian stood before a massive crowd at Liberty Square in the heart of Yerevan, Armenia. Thousands of Armenians had gathered in the capital to cheer on their leader: "Raffi! President! Raffi! President!" The man before them was tall and dynamic, his fist thrown into the air like a high-school football star. He drew himself to the microphone and thundered over the crowd: "Armenia! Armenia!" The people whistled and cheered. Many of them did not notice that they were being surrounded by riot police with red berets, reinforced by special units of the armed forces.

At exactly the same time, a few kilometers up a hill, Serzh Sargsyan was taking the oath of office for the presidency of the Republic of Armenia. The entire government was in attendance—all the church leaders, too. The official results had been clear about the incumbent's victory, with 59 percent of the vote. The man on stage was short, with silver hair and the disciplined expression of a military commander. He spoke solemnly about the challenges still facing the country: unemployment, poverty, emigration.

It was a sunny day. The ancient circular city glowed gold and pink in the biblical valley of Mount Ararat.

That day, April 9, there were two ceremonies in Armenia; the country was divided, and we had to choose which Armenia we belonged to. For my part, I was standing with the man at the square.

I looked to my father. He had already raised his right hand. The other Armenians, too, had raised their hands. They were holding up the Constitution, apricot ribbons tied around their wrists, and repeating after my father:

***I, a citizen of the Republic of Armenia,***
***Hereby dissolve my bonds with the current authorities.***
***I declare that I do not recognize false rulers,***
***I cannot submit to false laws,***
***I shall not obey false commands.***
***I am authorized by my natural rights,***
***Protected by the Constitution.***
***And I am not afraid.***
***And I cannot be bought.***
***And I shall not surrender.***

Raffi K. Hovannisian was born on November 20, 1959, in Fresno, California, and from the beginning of his life, his grandfathers Kaspar and Hovakim predicted that he would have a special destiny. The Armenian word they used was jagadakir: "the writ-

ing on the forehead." There were just a few problems standing in the way. The boy's father, Richard, was only a history teacher at the local junior high school; his mother, Vartiter, was still a medical intern at the county hospital. And they lived in a little wooden house. Kaspar had bought it in foreclosure, lifted it off its foundations, and hauled it by truck to a vacant lot on Alta Avenue, which cut through a working-class neighborhood of Armenian refugees.

It was difficult to explain to the children why the Armenians had come to the San Joaquin Valley in the first place, and why they had built their schools and red brick church and even their cemetery. Many parents didn't even try. The children were set free of their pasts and sent running into the vineyards and orchards of this new land: "the strange, weed-infested, junky, wonderful, senseless yet beautiful world" dramatized by the Armenian American writer William Saroyan. He had already won the Pulitzer and an Oscar by the time my father was growing up, but he could sometimes be seen, with his big mustache and mischievous smile, riding his bicycle through the streets of downtown Fresno.

But still there was the secret fermenting underneath it all, and a boy could only guess at it. Sometimes, late into the night, my father would hear his grandfather Kaspar screaming in his sleep.

Many people had nightmares on Alta Avenue. They saw burning villages and death marches. They saw their mothers being raped by foreign soldiers and their fathers hanging from the gallows. They saw themselves running through vast desert landscapes. It was my grandfather Richard's destiny, even before it was my father's, to come to terms with those nightmares. In 1963, Richard moved his family to Los Angeles, where he defended his Ph.D. at UCLA and eventually established an endowed chair in modern Armenian history. He became not only a pioneer of Armenian studies in the United States but also, in time, an internationally recognized authority on those secret events of 1915 replaying in his father's subconscious: the Ottoman Turkish government's efficient deportation and slaughter of a million and a half Armenians and the destruction of their ancient homeland.

For the time being, though, my father was living out a childhood unburdened by the history his father was writing. He joined the Boy Scouts and took piano lessons, lifted weights and wrote minimalist poetry. He played the line for the Palisades High Dolphins and became a firebrand member of the student council; he campaigned to get stalls put up in the boys' bathrooms. He was ripped and mysterious and charismatic—"a golden boy," according to his Pali High yearbooks, "a kind, thoughtful gentleman," "a rare man with class and charisma," "a hunk of man."

But at home, in his father's corner office, there was always the furious clattering of a typewriter and the clashing of Beethoven symphonies. Raffi understood that, through those long nights, a terrible history was coming to light—except this was not a dead history. It was a past that Turkey aggressively denied and, because of its well-funded efforts in Washington, a past that the United States and other allies refused to condemn. It was a past that inspired Armenian boys in the 1980s to kill Turkish diplomats in Los Angeles and blow up Turkish Airlines airport counters in Paris. On April 24, every year, tens of thousands of Armenians would march on Hollywood Boulevard in Los Angeles and converge upon Times Square in New York and surround Turkish consulates across the United States to protest the continuing denial and silence surrounding the Armenian Genocide of 1915.

**We did not have a homeland anymore. Instead we had churches and private schools and community centers scattered across a vast diaspora.**

It was a silence that had disastrous consequences not only for the Armenian people but for all the genocide victims who came afterwards. "It's a matter of indifference to me what a weak Western European civilization will say about me," Hitler told his generals just before invading Poland in 1939—adding, "Who, after all, speaks today of the annihilation of the Armenians?"

It was a past that was, in its own way, catching up to my father, too. At Pali High, he founded the Armenian Club. He founded other Armenian clubs everywhere he went after that: Berkeley, UCLA, the Fletcher School of Law and Diplomacy, Georgetown Law. By day, he worked as an international lawyer in the high offices of downtown Los Angeles, but at night he was creating the Armenian Bar Association. He was helping draft the Armenian Genocide resolutions being submitted to Congress every year. He was conducting interviews with genocide survivors for his father's oral-history collection at UCLA and teaming up with his father to testify before the State Assembly in Sacramento. Together, the two Hovannisians succeeded in getting a lesson on the Armenian Genocide into California's public-school curriculum. In 1985, my father married my mother, Armenouhi, also the descendant of survivors. They named their children after the cities and villages of old Armenia, on the western side of Mount Ararat, which had been dismantled in 1915.

The first thing I remember about my father is his voice, singing songs of war and revenge. This was the beginning of my education. Every night my father told me stories of our ancient homeland. For thousands of years our kings had ruled over an empire stretching from the Mediterranean to the Caspian Sea. It was a beautiful and mountainous land; according to the Bible, Noah's Ark had landed upon Mount Ararat—which meant the world had ended in Armenia and then been given a second chance. Thousands of years ago, we had entered our own covenant with God.

Now we did not have a homeland anymore. Instead we had churches and private schools and community centers scattered across a vast diaspora. There were entire blocks on Sunset Boulevard in Los Angeles lined with Armenian bakeries selling melted-cheese boreg and honey-soaked pakhlava. Long before Kim Kardashian, we had the Las Vegas tycoon Kirk Kerkorian and the French-Armenian singer Charles Aznavour. We'd had an Armenian governor in California, George Deukmejian. We could claim Jack "Dr. Death" Kevorkian, if we wanted to, and half of Cher, Andre Agassi, and the chess champion Gary Kasparov. When my father took me to the movies, we would stay for the closing credits and cheer at the Armenian last names, with their "-ian" and "-yan" endings.

But all along there had been another Armenia, too. This was an alternative homeland, hidden behind the Iron Curtain on the eastern side of Mount Ararat. That Armenia, with its capital of Yerevan, had actually survived 1915. It had even enjoyed two years of independence—a brief miracle of democracy that was the subject of Richard Hovannisian's sprawling four-volume magnum opus, The Republic of Armenia. Then its destiny had also turned. In 1920, the Red Army had advanced upon Eastern Armenia and slashed it into pieces; the territories of Artsakh, or Mountainous Karabakh, along with its majority Armenian

population, had been transferred under Joseph Stalin's seal to Soviet Azerbaijan. What remained was a rugged country of 30,000 square kilometers—a land-locked Communist republic under the control of the Kremlin.

Increasingly, though, it was Soviet Armenia that tugged at my father's imagination. Armenians actually lived there. The Armenian language, an eastern dialect of it, was still spoken there. And one day my father read in the newspapers that hundreds of thousands of Armenians had flooded Opera Square in Yerevan to begin a powerful intellectual mass movement against the Soviet authorities. Except they were not chanting about the past—about recognition for 1915—as we were in the diaspora. The Armenians in Yerevan were chanting about their future. They wanted Mountainous Karabakh back from Azerbaijan. They wanted sweeping democratic reforms from the Kremlin. It seemed, at times, that they even wanted independence. When Soviet leader Mikhail Gorbachev learned of this, he immediately declared martial law and shut down the demonstrations. The movement appeared to be finished.

Then, on December 7, 1988, the day my mother was sworn in as a lawyer in Los Angeles, she and my father came home to find me sitting with the babysitter and staring at the television. I was mesmerized by the images of the earthquake: falling buildings, freezing bodies, the town clock stopped at 11:41. "Armenia is hurting," I tried to explain; I was two years old. By the following day, my father was on board an emergency cargo plane belonging to the State Department—heading for the ruins of Soviet Armenia.

The following year, my father quit his job and defied his parents by moving our family to Armenia. My mother and I were there to see the statue of Lenin come down at Lenin Square, which the people renamed Republic Square, and to join the new wave of protests at Opera Square, which the people renamed Liberty Square. We were there, too, for Independence Day—September 21, 1991—and then the inauguration of Levon Ter-Petrosyan, the professorial figurehead who became Armenia's first elected president. And we were there when my father received the phone call of a lifetime. The president himself was at the other end of the line, asking if my father would serve as the new republic's first minister of foreign affairs. The job would pay 600 rubles, $143, a month.

That is how a family of American citizens came to unlock the doors of an abandoned Soviet building on Baghramyan Boulevard, which was to be our ministry. I ran out behind my parents as they walked the dark corridors, which opened up to rooms filled with stone statues and paintings of frightening men: the ghosts of Communists past. When we arrived at my father's office, there was nothing there except a fax machine. My father smiled his deep American smile. He plugged in the machine and knocked on it with his fist until it came to life. Then he took out a pen and scrawled a few words across a white sheet of paper. We huddled around the fax machine and the transmissions began, to one foreign government after another: Armenia is free. Please recognize.

As I settled into one of the mansions in the government compound with my mother and my two younger brothers, my father began his ministry. We followed him mostly on television, as he traveled the world to negotiate diplomatic relations with every major democracy. At summits of international organizations, he was making the case for an independent Mountainous Karabakh, where Armenian guerrilla forces were fighting an improbable war of liberation against the armies of Azerbaijan. He was raising Armenia's red, blue, and orange flag at United Nations headquarters in New York. Then, in September 1992, at a Council of Europe meeting in Istanbul, my father broke the genocide taboo and demanded justice for 1915 in the very heart of the Republic of Turkey.

That night there were celebrations in Los Angeles, Paris, Beirut, and other cities where Armenians had sought refuge after the genocide. The Los Angeles Times called Raffi "the most popular man in the newly reborn Republic of Armenia," and reported that "a recent poll in the Armenian newspaper Epokha found that he enjoyed a mind-boggling 96 percent approval rating, more than President Ter-Petrosyan."

**"Armenia is hurting," I tried to explain; I was two years old. By the following day, my father was on board an emergency cargo plane belonging to the State Department.**

While the public approved of my father, the president increasingly did not. Even before the Council of Europe meeting, Ter-Petrosyan and his foreign minister had clashed over ties with Turkey. The president wanted to normalize relations with Turkey and be more strategic on the Karabakh issue; he said that Armenia's good standing with neighboring countries was necessary for Armenia's security and survival. The way he saw it, Raffi's performance in Istanbul was an act of sabotage against that conciliatory foreign policy.

A few weeks later, in a private meeting at the presidential office, Ter-Petrosyan accepted my father's resignation. Overnight, my father became a dissident in the very republic he had spent his life dreaming about.*



Raffi Hovannisian, then foreign minister of Armenia, shakes hands with U.S. President George W. Bush. (Courtesy of Garin Hovannisian)

* Full article can be found at *The Atlantic* magazine online:
http://www.theatlantic.com/international/archive/2015/04/one-hundred-years-of-exile-armenia/391209/

* Հոդվածը ամբողջությամբ կարող եք ընթերցել *The Atlantic* ամսագրի կայքում.
http://www.theatlantic.com/international/archive/2015/04/one-hundred-years-of-exile-armenia/391209/

# Հայաստան-2015. փաստեր, իրադարձություններ

**2 հունվարի**
Հայաստանի Հանրապետությունը պաշտոնապես դարձավ Եվրասիական տնտեսական միության անդամ, որի մասին պայմանագիրն ուժի մեջ է մտել 2015թ. հունվարի 1-ին:

**12 հունվարի**
Գյումրիում տեղակայված ռուսական ռազմահենակետի զինծառայող Վալերի Պերմյակովը՝ մուտք գործելով գյումրեցի Ավետիսյանների բնակարան, հրազենով սպանեց ընտանիքի 7 անդամներին:

**31 հունվարի**
«100-ամյակն առանց ռեժիմի» շարժումը կազմակերպեց ավտոերթ դեպի Արցախ, սակայն Բերձորում ոստիկանական մեքենաներով անհայտ անձինք հարձակվեցին ավտոերթի մասնակիցների վրա, դաժան ծեծի ենթարկեցին նրանց՝ հասցնելով մարմնական վնասվածքներ եւ կոտրելով մեքենաներն ու դրոշները:

**12 փետրվարի**
Հայաստանի հանրապետական կուսակցության խորհրդի նիստում Սերժ Սարգսյանը հրապարակայնորեն սուր քննադատության ենթարկեց «Բարգավաճ Հայաստան» կուսակցության առաջնորդ, խոշոր գործարար Գագիկ Ծառուկյանին՝ հնչեցնելով բազմաթիվ մեղադրանքներ վերջինիս հասցեին եւ արգելելով զբաղվել քաղաքականությամբ:

**5 մարտի**
«Բարգավաճ Հայաստան» կուսակցության առաջնորդ, գործարար Գագիկ Ծառուկյանը կուսակցության արտահերթ համագումարում հայտարարեց, որ այլեւս չի զբաղվելու ակտիվ քաղաքականությամբ, վայր է դնելու կուսակցության նախագահի ու խմբակցության ղեկավարի լիազորությունները: Այս քայլով էլ, ըստ էության, կասեցվեց ՀԱԿ-ԲՀԿ-«Ժառանգություն» ոչիշխանանական եռյակի գործունեությունը:

**8-13 ապրիլի**
Հայազգի ամերիկացի հեռուստաաստղ Քիմ Քարդաշյանը ամուսնու՝ հայտնի երգիչ Քանյե Ուեսթի, դստեր եւ քրոջ հետ գտնվում էր Հայաստանում՝ իր ծագման ու արմատների մասին հեռուստահաղորդում պատրաստելու նպատակով:

**23 ապրիլի**
Հայոց Ցեղասպանության 100-րդ տարելիցի կապակցությամբ System of a Down (SOAD) ռոք-խումբը Wake up the souls (Արթնացե՛ք, հոգիներ) խորագրով միջազգային շրջագայության շրջանակում բացօթյա համերգ ունեցավ Երեւանում՝ Հանրապետության հրապարակում:

**24 ապրիլի**
Հայաստանի Հանրապետությունում բարձր մակարդակով նշվեց Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցը, որին մասնակցեցին Ֆրանսիայի, Ռուսաստանի, Կիպրոսի եւ Սերբիայի նախագահները, բարձրաստիճան պաշտոնյաներից կազմված պատվիրակություններ մի քանի տասնյակ երկրներից:

**17 հունիսի**
Հրապարակվեց Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (ՀԾԿՀ) որոշումը՝ ՀՀ տարածքում էլեկտրաէներգիայի թանկացման վերաբերյալ: Մեկ տարվա ընթացքում դա հոսանքի սակագնի երկրորդ բարձրացումն էր:

**22 հունիսի**
Էլեկտրաէներգիայի թանկացման վերաբերյալ ՀԾԿՀ որոշման դեմ «Ո՛չ թալանին» նախաձեռնության կազմակերպած հանրահավաքն ու երթն ավարտվեցին Երեւանի Բաղրամյան պողոտայում՝ նախագահական նստավայրի դիմաց սկիզբ առած նստացույցով: Հունիսի 23-ի վաղ առավոտյան ոստիկանության ուժերը ջրցան մեքենաներով ցրեցին նստացույցը: Նույն օրը բողոքի մասնակիցները վերադարձան Բաղրամյան պողոտա եւ վերսկսեցին նստացույցը, ինչի արդյունքում Բաղրամյան պողոտան երկու շաբաթ ամբողջությամբ փակ էր, իսկ քաղաքի երթեւեկությունը՝ կաթվածահար: Բողոքի ակցիաները պսակվեցին «Էլեկտրիկ Երեւան» անվամբ եւ լայնորեն լուսաբանվեցին տեղական ու միջազգային լրատվամիջոցներում:

**15 հուլիսի**
Հրաժարական տվեց ՀՀ արդարադատության նախարար Հովհաննես Մանուկյանը:

Սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողովը հրապարակեց Հայաստանը խորհրդարանական հանրապետության վերափոխող Սահմանադրության առաջին 7 գլուխների նախագիծը (մյուս 8 գլուխները հրապարակվեցին օգոստոսի 4-ին):

**4 սեպտեմբերի**
Սերժ Սարգսյանի հրամանագրով ՀՀ արդարադատության նախարար նշանակվեց ԱԺ հանրապետական պատգամավոր Արփինե Հովհաննիսյանը:

**24 սեպտեմբերի**
Ադրբեջանի զինված ուժերը շարունակում էին գնդակոծել Տավուշի մարզի սահմանամերձ բնակավայրերը, ինչի հետեւանքով զոհվեց 3 խաղաղ բնակիչ, վիրավորվեց՝ 3-ը:

**12 հոկտեմբերի**
Տեղի ունեցավ «Նոր Հայաստան» հանրային փրկության ճակատի անդրանիկ մամուլի ասուլիսը, որի ընթացքում հայտարարվեց Ճակատի քաղաքական խորհրդի եւ նրա ղեկավարությամբ գործող Ընդդիմության միասնական շտաբի ստեղծման մասին: «Նոր Հայաստան» ճակատի կազմում են «Ժառանգություն» կուսակցությունը, «Հիմնադիր խորհրդարանը», «Ժողովրդավարական հայրենիք» կուսակցությունը, «Ռոքի՛, Հայաստան» քաղաքացիական շարժումը:









**26 հոկտեմբերի**
Տարածաշրջանային այցի շրջանակում Հայաստան ժամանեցին ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահներ Ջեյմս Ուորլիքը (ԱՄՆ), Պիեռ Անդրիեն (Ֆրանսիա) եւ Իգոր Պոպովը (Ռուսաստան):

**4 նոյեմբերի**
Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի (ԵԽԽՎ) քաղաքական հարցերի եւ ժողովրդավարության հանձնաժողովը Փարիզում ընդունեց ԵԽԽՎ բրիտանացի պատգամավոր Ռոբերտ Ուոլթերի հեղինակած «Բռնության աճը Լեռնային Ղարաբաղում եւ Ադրբեջանի մյուս գրավյալ տարածքներում» անվանումով զեկույցը:

**9 նոյեմբերի**
ՀՀ արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանի հրավերով աշխատանքային այցով Հայաստան ժամանեց Ռուսաստանի արտաքին գործերի նախարար Սերգեյ Լավրովը:

**11 նոյեմբերի**
Ռուսաստանի Դաշնության նախագահ Վլադիմիր Պուտինը կարգադրեց Հայաստանի հետ համաձայնագիր ստորագրել կովկասյան տարածաշրջանում ՀՕՊ Միացյալ տարածաշրջանային համակարգի ստեղծման մասին:

**23 նոյեմբերի**
ԵԽԽՎ սոցիալական հանձնաժողովի նիստում ընդունվեց բոսնիացի պատգամավոր Միլիցա Մարկովիչի «Ադրբեջանի սահմանամերձ շրջանների բնակիչները կանխամտածված կերպով զրկված են ջրից» հակահայ զեկույցը, որը բանաձեւի նախագիծ է եւ քննարկման ու քվեարկության է դրվելու ԵԽԽՎ ձմեռային նստաշրջանում:

**1 դեկտեմբերի**
Երեւանի Ազատության հրապարակում «Նոր Հայաստան» հանրային փրկության ճակատը անցկացրեց առաջին համապետական հանրահավաքը, որը շարունակվեց մայրաքաղաքի կենտրոնական փողոցներով կազմակերպված երթով եւ ավարտվեց Ազատության հրապարակում մեկնարկած նստացույցով:

**6 դեկտեմբերի**
Հայաստանի Հանրապետությունում անցկացվեց սահմանադրական փոփոխությունների հանրաքվե, որի արդյունքում ընդունվեց առաջարկվող Սահմանադրությունը: Տարբեր կուսակցություններ, հասարակական շարժումներ, դիտորդներ ու լրատվամիջոցներ ազդարարեցին համատարած ընտրախախտումների մասին:

**7 դեկտեմբերի**
ՀՀ արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանը եւ Եվրոպական հանձնաժողովի փոխնախագահ, Եվրոպական Միության միասնական արտաքին քաղաքականության ու պաշտպանության հարցերով բարձր ներկայացուցիչ Ֆեդերիկա Մոգերինին Բրյուսելում ազդարարեցին Հայաստանի եւ ԵՄ-ի միջեւ նոր իրավական շրջանակային փաստաթղթի շուրջ բանակցությունների մեկնարկը:

**15 դեկտեմբերի**
Հայկական Ջուղայի ադրբեջանական տմարդի ոչնչացման տասնամյա տարելիցն է:

**THE ARMENIAN CENTER FOR NATIONAL AND INTERNATIONAL STUDIES**

75 Yerznkian Street
Yerevan 0033, Armenia

Telephone (37410) 52.87.80 / 27.48.18
Telefax (37410) 52.48.46
Email: root@acnis.am

**ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ ՀԵՏԱԶՕՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ**

75 Երզնկեան փողոց
Երեւան 0033, Հայաստան

Հեռախօս (37410) 52.87.80 / 27.48.18
Հեռապատճէն (37410) 52.48.46

# RENEW TODAY

Dear friends and compatriots, join us in realizing the Center's goals by generously renewing your annual support.

Supporters who contribute $100 or more per year will receive, upon request, all Center publications.

All donations are tax-deductible, and may be sent to the following address:

# ԿՈՉ ԱՋԱԿՑՈՂՆԵՐԻՆ

Սիրելի՛ հայրենակիցներ, սատարէք Կենտրոնի ծրագրերին՝ նորոգելով Ձեր աջակցութիւնը, ինչի համար մեր խորին երախտագիտութիւնն ենք յայտնում:

Ովքեր Կենտրոնի գործունէութեանն օժանդակելու նպատակով կը նուիրաբերեն տարեկան 100 ամերիկեան դոլլար եւ աւելի, յայտ ներկայացնելուց յետոյ, անվճար կը ստանան Կենտրոնի հրատարակութիւնները:

Ձեր նուիրատուութիւնները հարկազերծ են եւ կարելի է ուղարկել հետեւեալ հասցէով՝

**The Armenian Center for National and International Studies**
P.O. Box 57666, Sherman Oaks, California 91413

❑ **YES**

We want to support the **Center's** outreach. Please put us on the mailing list for updates, notices, and special publications.

❑ **ԱՅՈ**

Մենք պատրաստ ենք զօրակցել **Կենտրոնին:** Մեզ տեղեակ պահէք նոր աշխատանքների մասին:

Name/Անուն ____________________

Company/Ընկերութիւն ____________________

Address/Հասցէ ____________________

Telephone/Հեռախօս ____________ Telefax/Հեռապատճէն ____________ Email-ի հասցէ ____________

Tax-deductible contribution enclosed for:

❑ $100 ❑ $500 ❑ $1000 ❑ $5000 ❑ $10,000

❑ Այլ ____________ ❑ Other ____________

**The Armenian Center for**
**National and International Studies**
P.O. Box 57666
Sherman Oaks, California 91413



2015թ. Երեւան

Ռազմավարական եւ ազգային հետազոտությունների
հայկական կենտրոն

ՀՀ, 0033 Երեւան, Երզնկյան 75
Հեռ՝ (37410) 528780, 274818
Ֆաքս՝ (37410) 524846
Էլ.փոստ՝ root@acnis.am
Վերկայք՝ www.acnis.am

Ռազմավարական եւ ազգային հետազոտությունների հայկական կենտրոնը 1994թ. հիմնադրել է ՀՀ առաջին արտգործնախարար Րաֆֆի Կ. Հովհաննիսյանը՝ արժանանալով հայաստանյան եւ Սփյուռքի աջակիցների լայն շրջանակների զորակցությանը: Հետեւելով համաշխարհային զարգացումներին, գիտելիքների հիմքեր խարսխելով, հանրության հետ երկխոսություն ծավալելով՝ Կենտրոնը հետխորհրդային տիրույթում հանդես է գալիս որպես երկրաքաղաքական ստեղծագործական մտածողություն ձեւավորող եւ միջազգային միջավայրի համապարփակ ընկալմանը նպաստող ուժ: Վերջին շրջանում Կենտրոնն առաջնահերթ տեղ է հատկացնում տարածաշրջանային անվտանգության ու համագործակցության, քաղաքացիական կրթության, պետության եւ ազգի համար վճռորոշ՝ ներքին ու արտաքին քաղաքականությունների կիրառական հետազոտությանը:

The Armenian Center for National and International Studies (ACNIS) is a leading independent strategic research center located in Yerevan, Armenia. As an independent, objective institution committed to conducting professional policy research and analysis, ACNIS strives to raise the level of public debate and seeks to broaden public engagement in the public policy process, as well as fostering greater and more inclusive public knowledge. Founded in 1994, ACNIS is the institutional initiative of Raffi K. Hovannisian, Armenia's first Minister of Foreign Affairs. Over the past 20 years, ACNIS has acquired a prominent reputation as a primary source of professional independent research and analysis covering a wide range of national and international policy issues.

**Armenian Center for National and International Studies**
75, Yerznkian Street, Yerevan 0033, Armenia
Phone: (37410) 52-87-80 or 27-48-18, Fax: (37410) 52-48-46
Email: root@acnis.am or info@acnis.am, Website: www.acnis.am

Армянский центр стратегических и национальных исследований был основан в 1994 г. первым министром иностранных дел РА Раффи К. Ованнисяном, удостоенным поддержки и содействия широких кругов единомышленников в Армении и Спюрке. Следуя развитию мировых процессов и базируя основы знаний, развертывая диалог с общественностью, Центр в постсоветском пространстве выступает как формирующий геополитическое творческое мышление и силу, способствующую всеобъемлющему восприятию международной среды. В последнее время Центр уделяет первоочередное внимание региональной безопасности и сотрудничеству, гражданскому образованию, прикладным исследованиям внутренней и внешней политики, имеющим важнейшее значение для государства и нации в целом.

**Армянский центр стратегических и национальных исследований**
75 Ерзнкяна, Ереван 0033, Армения
Тел.: (37410) 52-87-80 или 27-48-18
Эл. почта: root@acnis.am or info@acnis.am, Веб-сайт: www.acnis.am